«Վ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«8» հունվարի 2002թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունվարի 2002 թվականի № 17

քաղ. Երևան

Լիազորություն վերապահելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարության և «Կորպորասիոն Ամերիկա Ս. Ա.»-ի միջև 2001 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված կոնցեսիայի պայմանագրին:

2. Նշված պայմանագիրն ուժի մեջ մտնելու և տիրապետման միջև ընկած անցումային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կառավարության հատուկ ներկայացուցիչ նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին՝ նրան վերապահելով կոնցեսիայի պայմանագրի «ե» հավելվածով նախատեսված միջոցառումների իրականացման հետ կապված որոշումներ ընդունելու լիազորությունը:

3. Լիազորել Հայաստանի Հանրապետության կառավարության հատուկ ներկայացուցչին անհրաժեշտության դեպքում «Կորպորասիոն Ամերիկա Ս. Ա.»-ի հետ վերաբանակցել պայմանագրի «ե» հավելվածի դրույթների շուրջ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 8-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

215
10 01

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

1. Համագործակցող կողմեր

1.1 Վարձատու

1.2 Վարձակալ

1.3 The Adjudicator

2.Անցյալ

3.Սահմանումներ

3.1 Adjudicators

3.2 Օդանավակայան

3.3 Միջազգային օդանավակայն

3.4 Authority of the Application.....

3.5 Վարձատու

3.6 Կոնցեսիա

3.7 Վարձակալ

3.8 Պայմանագիր

3.9 Պայմանագրի ուժի մեջ մտնելը

3.10 Արգենտինայի ռազմաօդային ուժեր (FAA)

3.11 Բացառություն

3.12 Տեխնիկական փորձագետ

3.13 Օդանավակայանների Ա խումբ

3.14. IATA

3.15 OACI

3.16 Օդային օպերատոր

3.17 Օդանավակայանների Ազգային Ղեկավարման կազմակերպություն (ORSNA)

3.18 Գլխավոր ծրագիր

3.19 Կոնցեսիայի ժամկետը

3.20 Պայմանագրի պայմանները

3.21 Ազգային օդանավակայանների համակարգ (SNA)

3.22 Տիրապետում

3.23 Արտոնության օրդեր

3.24 Սպառողներ

3.25 Համընդհանուր տրանսպորտի առարկա

3.26 ժամանակացույց

4. Օբյեկտ

4.1 Բացառություն և պատասխանատվություն

4.2 Նպատակներ

4.3 Միասնություններ և դժգոհություններ

4.4 Օդանավակայանի փոխանակում

6. Գույքի կառավարում

6.1 Փոխանցվող գույք

6.2 Շարժական գույք

6.3 Անշարժ գույք

6.3.1 Օգտագործման փոխանցում

6.3.2 Պարտականություններ

6.3.3 Գույքի շարքից դուրս գալու դեպքեր

6.3.4 Imposibilidad Juridica de Mantener el Uso del Bien

6.3.5 FAA-ի հետ հարաբերություններ

7. Սոցիալական ռեժիմ

7.1 Սոցիալական օբյեկտ

7.2 Սահմանափակումներ

7.3 Տեխնիկական փորձագետ

8. Հաշվապահություն

9. Տեղեկատվություն

10. Ներդրումային ծրագիր

10.1 Իրականացում

10.2 Երաշխիքներ

11. Գլխավոր ծրագիր

12. Արգենտինայի ռազմաօդային ուժեր- ռեզերվ

12.1 Օպերատիվ աշխատանքներ

12.2 Վերաքննման աշխատանքներ

12.3 Անվտանգության աշխատանքներ

13. Վարձակալի պարտավորությունները

14. Վարձատուի պարտականությունները

15. Ֆորս-Մաժոր

16. Գնացուցակ

17. Օրինադրություն

17.1 Արժեք

17.2 Շրջապատող միջավայրի հետ կապված ծախսեր

17.3 Օրինադրության վճարման ուշացում

19. Պատասխանատվություն

20. Դատական պատասխանատվություն

21. Պայմանագրի կատարման երաշխավորում

21.1 Տարատեսակներ

21.2 Իրականացում

21.3 Երաշխավորման պարտադիր լինելը

21.4 Երաշխավորման վերահաստատում

21.5 Երաշխավորման վերադարձում

22. Սանկցիաներ

23. Պայմանագրի լուծում վարձակալի կողմպարտականությունների չկատարման դեպքում

23.1 Վարձակալի չկատարման դեպքում

23.2 Վարձատուի չկատարման դեպքում

24. Կոնցեսիայի ավարտը

24.1 Ստացում

24.2 Գույքի վերաբերյալ

24.3 Վարձակալի պարտքերի վերաբերյալ

24.4 Կոնցեսիայի մեջ մտնող ծառայությունների վերաբերյալ

24.5 Պայմանագրեր իրականացման ընթացքում

25. Կոնցեսիայի հետգնումը

25.1 Հնարավորություն

25.2 Հանգամանքներ

26. Փոխանցում

27. Բանավեճեր

28. Գործող օրենսդրություն և արդարադատություն

Հավելվածներ

1. *Տարիֆային ցուցակ*

A. X-ի տեղադրման գործոն

1. Երթևեկության ընդլայնում
2. Գործանականության բարելավում
3. Ծառայությունների որակը
4. Նախատեսված ներդրումների մակարդակը
5. Նախատեսված վերադարձման գինը

B. Վարձակալի ներդրումների կամ գործունեության արժեքը

C. Ճանապան ծառայությունների հստակ գինը

2. *Նախնական գնացուցակ*

1. Վայրէջքի կատարման գները
2. Օդանավերի կանգնավայրի գները
3. Օդագնացության գները
4. Անվտանգության գները
5. Միգրացիայի գինը
6. Թռիչքի անվտանգության գինը
7. Վայրէջքի կատարման օգնության գինը

3. *Ներդրումային ծրագիր.*

.

4. Օդանավակայանի չափանիշները/ Ծառայության որակը

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության

և

«Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.»-ի

միջև

Ստորագրված է՝ «17»-ը դեկտեմբերի, 2001թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԿՈՂՄԵՐԸ 1

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1

III. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1

IV. ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ 8

V. ՆՊԱՏԱԿԸ 8

VI. ԺԱՄԿԵՏԸ 12

VII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....12

VIII. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 15

IX. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ 18

X. ՄԱՍՏԵՐ-ՊԼԱՆ 19

XI. ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 20

XII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 21

XIII. ԿԱՆՈՆՆԵՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ. 24

XIV. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ. 26

XV. ՏԻՐԱՊԵՏՈՒՄ 26

XVI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈՂ 27

XVII. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 28

XVIII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ 28

XIX. ՓՈԽԱՆՑՈՒՄ 31

XX. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 31

XXI. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ 33

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ա. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 35

Բ. ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑԱՆԿ. 43

Գ. ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ. 47

Դ. ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ, ԳՈՒՅՔԸ. 48

Ե. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԵՎ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....49

Զ. ԼԻԱԶՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....52

I. Կողմերը

Սույն պայմանագիրը կնքվում է ստորև նշված կողմերի միջև և կողմից՝

1. ՀՀ կառավարություն, որը ներկայացվում է Հավելված Զ-ում կցվող ՀՀ Կառավարության որոշման հիման վրա հանդես եկող ՀՀ վարչապետ պարոն Անդրանիկ Մարգարյանի կողմից /գտնվելու վայրը՝ ՀՀ, Ք. Երևան, Հանրապետության Հրապարակ 1/:

2. «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունը /այսուհետև՝ Կառավարիչ/, ի դեմս պարոն Էդվարդո Էրնեկյանի, որը հանդես է գալիս որպես Տնօրենների խորհրդի Նախագահ, Հավելված Զ-ում կցվող Խորհրդի որոշման հիման վրա և սույն պայմանագրի հետ կապված բոլոր հարցերի գծով գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց 8:

II. Ընդհանուր տեղեկություններ

2.1 ՀՀ Կառավարությունը որոշել է արդիականացնել Զվարթնոց միջազգային օդանավակայանի (այսուհետև՝ Օդանավակայան) ֆիզիկական ենթակառուցվածքները, դրանց որակը բարձրացնել և հասցնել ժամանակակից չափանիշների, ինչպես նաև բարելավել Օդանավակայանի կառավարման մակարդակը:

2.2 Վերոհիշյալ որոշման իրականացումն արագացնելու նպատակով ՀՀ Կառավարությունը որոշել է նաև պայմանագիր կնքել օդանավակայանների կառավարման միջազգային փորձ ունեցող մասնավոր ընկերության հետ: Այդ նպատակով ՀՀ Կառավարությունը պատրաստվում է Կառավարչին տալ Օդանավակայանի շահագործման, կառավարման և առևտրային օգտագործման բացառիկ իրավունք առնվազն 30 (երեսուն) տարի ժամկետով:

2.3 ՀՀ կառավարությունը և Կառավարիչը հայտնել են իրենց հետաքրքրությունը՝ կնքելու կոնցեսիայի պայմանագիր՝ ս.թ. սեպտեմբերի 22-ին ստորագրելով Փոխըմբռնման հուշագիր:

2.4 Որպես սույն պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ Կողմերը սույն պայմանագրի հավելված Ա-ում նշված կարգով ներկայացնում և երաշխավորում են միմյանց որոշակի պայմաններ և փաստեր:

III. Պայմանագրում օգտագործվող հասկացությունները

3.1. Սույն պայմանագրի շրջանակներում, ստորև նշված տերմինները թե եզակի, և թե հոգնակի թվով օգտագործվելիս ունեն հետևյալ իմաստները.

Անհրաժեշտ ենթակառուցվածք. Օդանավակայանը շրջապատող կամ նրա հետ կապակցված բոլոր առկա ենթակառուցվածքները, ինչպես նաև բոլոր հասարակական նշանակություն ունեցող կոմունալ միջոցները և համակարգերը, որոնք անհրաժեշտ են կամ կարող են անհրաժեշտ լինել ցանկացած օդանավակայանային գործունեություն իրականացնելու համար, այդ թվում՝ հանրային ճանապարհներ, էլեկտրաէներգիայի մատակարարման գծեր, հեռահախորդակցության գծեր և այլն: Կասկածից խուսափելու համար սահմանվում է, որ հիմնական միջոցները համարվում են Անհրաժեշտ ենթակառուցվածքների, այլ ոչ՝ Գույքի մաս, համաձայն հետևյալ չափանիշների, ընդ որում՝ թվարկված չափանիշների ցանկը սպառիչ չէ. (i) դրանց անուղղակի օգտագործումն Օդավանակայանի գործունեության համար, (ii) դրանց օգտագործման ընդհանուր բնույթը, այսինքն՝ դրանց բուն նշանակությունը ոչ Օդանավակայանի գործունեության համար, (iii) դրանց գտնվելն Օդավանակայանի սահմանագծերից դուրս, (iv) այն փաստը, որ Կառավարչի բացառիկ հսկողությունը դրանց նկատմամբ անհրաժեշտ չէ, որպեսզի Օդանավակայանը Կառավարչի կողմից կառավարվի սույն Պայմանագրով նախատեսված կերպով, կամ (v) այլ ողջամիտ միջազգային չափանիշների համաձայն: Վերը թվարկված օրինակները չունեն որևէ գերադասություն կամ կարևորություն ըստ թվարկման հերթականության:

Բացասական հետևանքներ. բոլոր տեսակի վնասներ, տույժ-տուգանքներ, ծախսեր, փոխհատուցման գումարներ, պարտավորությունները, պարտականություններ, հարկեր, ծանրաբեռնվածություններ, ուղղակի և անուղղակի կորուստներ, ծախսեր և վարձավճարներ, այդ թվում՝ դատական ծախսեր և ողջամիտ գումարների սահմաններում՝ փաստաբանական ծառայությունների վճարներ և ծախսեր, որոնք առաջացել են Կողմերից մեկնումեկի համար կամ պարտադրվել Կողմերից մեկնումեկին որևէ գործողության կամ բացթողման, բոլոր իրավաբանական գործողությունների, դատավարությունների, հայցերի, դատական լսումների, հետաքննությունների, մեղադրանքների, գանգատների, պահանջների, վճիռների, հարկադրանքի միջոցների, հրամանների, որոշումների կամ վճիռների արդյունքում:

18.6 և 18.7 կետերի համաձայն սույն Պայմանագրի դադարեցման արդյունքում առաջացող Բացասական հետևանքները հաշվարկվում են սույնով նախատեսված վնասների վերացման դրույթների համաձայն՝ բացառությամբ Երրորդ անձանց կողմից պատճառված Բացասական հետևանքների, որոնց նկատմամբ լիովին գործում է Բացասական հետևանքների հասկացության սահմանումը:

Պայմանագիր. Օդանավակայանի կառավարման, շահագործման և առևտրային զարգացման նպատակով կնքվող սույն Պայմանագիրը և, բացառությամբ եթե համատեքստով այլ կերպ չի պահանջվում, սույն Պայմանագիրը փոփոխելու կամ լրացնելու նպատակով Կողմերի կնքած բոլոր պայմանագրերը և փաստաթղթերը:

Օդանավակայան. Հայաստանի Հանրապետության Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, որը սույն Պայմանագրի կտրվածքով համարվելու է կազմակերպված միավոր, որն ընդգրկում է Օդանավակայանի սահմանագծից ներս ընկած հողատարածքները, վագքուղիները, ղեկուղիները, պլատֆորմները,

տերմինալները, ավտոմեքենաների կայանատեղերը, անգարները և այլ շինությունները, վառելիքի պահեստարանները և սահմանագծից ներս ընկած այլ կառույցներ, ինչպես նաև՝ մնացած Գույքն ամբողջությամբ:

Օդանավակայանային գործունեություն. սույնի V և VII բաժիններում նշված յուրաքանչյուր և ցանկացած գործունեություն:

Օդանավակայանի ղեկավարման իրավասու մարմին. Օդանավակայանը կառավարելու և Օդանավակայանի գործունեության վերաբերյալ կարգավորող ակտեր ընդունելու իրավասությամբ օժտված անձ/մարմին՝ այնքանով, որքանով այդ գործառույթները չեն խառնվում քաղաքացիական ավիացիայի օրենքներով և իրավական ակտերով ՀՀ Կառավարության ոչ օտարելի գործառույթներին:

Օդանավակայանային վճարներ. այն վճարները, որոնք գանձվում են բեռներից, օդանավերը շահագործողներից և ուղևորներից /սույն պայմանագրի հավելված Բ-ի համաձայն/ և այն վճարները, որոնք կարող են գործել ICAO-ի և IATA-ի կանոնակարգերին համապատասխան:

Օդանավակայանային կանոնակարգումներ. այն կանոնակարգումը, որն ընդունվում է կառավարչի կողմից համաձայն IX բաժնի:

Ընկերություններ. «Զվարթնոց միջազգային օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերություն, «Ավիասնունդ» փակ բաժնետիրական ընկերություն, «Ավիառուսումնական կենտրոն» ՓԲԸ, «Ավիավառելիքի լիցքավորում» ՓԲԸ, «Ավիաբուժ» բժշկական կենտրոն ՓԲԸ և բոլոր այլ անձիք, որոնք ներկայումս մատուցում են այնպիսի ծառայություններ, որոնք սույն Պայմանագրի համաձայն Տիրապետման օրվանից սկսած կատարելու է Կառավարիչը:

Ուժի մեջ մտնելու օր. Պայմանագիրը հաստատող որոշման՝ ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրը:

Ծանրաբեռնվածություն - ցանկացած գրավ, գանձույթ /ֆիքսված և լողացող/, գրավադրություն, օպցիոն, իրավունք, անվան պահպանման իրավունք կամ նեգատիվ գրավ, կցորդ, թեթևացում, կորստի մասին տեղեկություն կամ ցանկացած այլ տեսակի ապահովություն, սերվիտուդ, հայց, պահանջ, երրորդ անձանց իրավունքներ կամ ծանրաբեռնվածություն /թե դրամական, և թե այլ/ կամ ցանկացած պարտավորություն, ներառյալ ցանկացած պայմանական պարտավորություն, որը կառաջացնի վերոհիշյալը:

Բնապահպանական, առողջապահական և անվտանգության պահանջներ. Բոլոր գործող, փոփոխված կամ ուժի մեջ մտնելիք ICAO և IATA ստանդարտները, բոլոր պետական և տեղական օրենքները, կանոնակարգերը, ցուցումները, և այլ դրույթները, որոնք ունեն օրենքի ուժ, բոլոր դատական և վարչական հրամանները և որոշումները, հանրային առողջապահության, անվտանգության, աշխատողների առողջության և անվտանգության հետ կապված բոլոր պայմանագրային պարտավորությունները, շրջակա միջավայրի աղտոտման և պահպանության բոլոր

պահանջները, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են վտանգավոր նյութերի կամ թափոնների, քիմիական նյութերի կամ խառնուրդների, միջատասպանների, աղտոտիչների, կեղտոտիչների, թունավոր քիմիկատների, բենզինային արտադրանքի կամ կցարտադրանքի, ազբեստի, պոլիքլորինացված բիֆենիլների, աղմուկի կամ ճառագայթման առկայությանը, օգտագործմանը, արտադրությանը, ստեղծմանը, տեղափոխմանը, մշակմանը, պահպանմանը, արտանետմանը, վերաբաշխմանը, պիտակավորմանը, ստուգմանը, տիրապետմանը, թափմանը, վտանգավոր արտանետմանը (բոլոր դեպքերում՝ կամ դեպի օդ, կամ գետնին կամ ջրի մեջ):

Բացառիկություն. նշանակում է, որ Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ոչ ՀՀ կառավարությունը, և ոչ էլ ցանկացած այլ պետական կամ տեղական իշխանության մարմին չի կարող ինքնուրույն կամ երրորդ անձանց իրավունք տալու միջոցով տրամադրել կամ մատուցել Օդանավակայանի կառավարչական և շահագործման ծառայություններ, կամ իր հաշվին իրականացնել կամ երրորդ անձանց տրամադրել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան Օդանավակայանային ցանկացած գործունեություն իրականացնելու իրավունք:

Վճարներ. Օդանավակայանում թույլատրված տնտեսական գործունեություն իրականացնող կամ տարածք զբաղեցնող անձանց կողմից վճարվելիք գումարները, որոնք կարող են ունենալ գանձույթների, գների, պայմանավորվածությունների, ռոյալթիների, զբաղեցման համար վճարների, մուտքի դիմաց վճարների, կոնցեսիոն վճարների և այլ տեսք:

Ֆորս-մաժորային իրադարձություն. ցանկացած անկանխատեսելի իրադարձություն (հատկապես՝ ներառյալ ահաբեկչության ակտ), որից անհնար է խուսափել և որն անհնար է կանխել, որի արդյունքում Կողմերից մեկը կամ Կողմերը չեն կարողանում կատարել իրենց պարտավորությունները: Կորպորատիվ հսկողությամբ կամ վարչական հարաբերություններով Կողմերին առնչվող որևէ այլ անձի պատճառով տեղի ունեցած կամ նրանց կողմից կատարված իրադարձությունները Ֆորս-մաժորային չեն հանդիսանում:

ՀՀ կառավարություն. Հայաստանի Հանրապետության կառավարություն:

IATA. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիա:

ICAO. Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն:

Ներքին շահութաբերություն. Օդանավակայանում ներդրողի ընդհանուր ներդրումների (այդ թվում՝ սեփական կապիտալի, դրա համարժեքների, ենթավարկերի և/կամ փոխարկելի վարկերի և միջազգային աուդիտորական ընկերության կողմից աուդիտ անցած Կառավարչի հաշվապահական հաշվետվություններում արտացոլված ցանկացած այլ կապիտալ ներդրման) տարեկան ներքին զուտ դոլարային շահութաբերությունը հարկվելուց հետո: Ներքին շահութաբերության հասկացության հետ օգտագործվող «համաձայնեցված» բառը մեկնաբանվում է 8.1 կետի (xi) պարբերության և 12.9

կետի համաձայն: Կառավարչի հետ փոխկապակցված անձանց կողմից տրամադրված ենթավարկերի և փոխարկելի վարկերի տոկոսագումարները համարվում են Ներքին շահութաբերության բաղադրիչներ:

Պարտավորություն. ցանկացած (հայտնի կամ անհայտ, ճշտված կամ չճշտված, բացարձակ կամ պայմանական, հաշվեգրված կամ չհաշվեգրված, իրացված կամ չիրացված, առկա կամ հետագայում առաջանալիք) պարտավորություն:

Լիցենզիաներ. ցանկացած լիցենզիա, թույլտվություն, լիազորում, հաստատում և համաձայնություն, որը պահանջվում է Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն կոնկրետ առևտրային գործունեություն իրականացնելու համար:

Վնասների վերացում. այն գումարը, որ ՀՀ Կառավարությունը վճարում է Կառավարչին համաձայն սույն Պայմանագրի 18.6 և 18.7 կետերի, որը հաշվարկվում է հետևյալ կարգով.

(i) Կանխիկով կապիտալ ներդրումների հանրագումարը՝ յուրաքանչյուրը տարեկան 20% դրույքաչափով կապիտալացմամբ՝ սկսած այն պահից, երբ Կանխիկով կապիտալի ներդրումը կատարվել է՝ մինչև հատուցման գումարի վճարման օրը,

հանած

(ii) Կանխիկով կապիտալից շահույթների հանրագումարը՝ յուրաքանչյուրը տարեկան 20% դրույքաչափով կապիտալացմամբ՝ սկսած այն պահից, երբ ստացվել է Կանխիկով կապիտալի շահույթ՝ մինչև հատուցման գումարի վճարման օրը,

գումարած

(iii) գոյություն ունեցող պարտավորությունները՝ կապիտալի կամ տոկոսագումարների տեսքով, որոնք առաջացել են Կառավարչի այլ ներդրումների կամ այլ գործունեության կապակցությամբ, և որոնք կարող են չեղյալ հայտարարվել կամ փոխանցվել ՀՀ Կառավարությանը կամ նոր Կառավարչի՝ հատուցման վճարման օրվա դրությամբ,

որտեղ

Կանխիկով կապիտալի ներդրումն այն է, երբ հետևյալ հաշվարկը տալիս է դրական (+) նշան. կապիտալի վճարումներ կանխիկով կամ համարժեքով, գումարած բաժնետերերի վարկեր, այդ թվում՝ սուբորդինացված և ոչ սուբորդինացված վարկեր, հանած վճարված շահաբաժինները՝ առանց շահութաբաժինների նկատմամբ հաշվարկվող հարկերի, հանած բաժնետերերի վարկերի դիմաց վճարված տոկոսագումարները՝ առանց տոկոսների նկատմամբ կիրառվող հարկային պահումների, հանած բաժնետերերի վարկերի մարումները, հանած կանոնադրական կապիտալից նվազեցումները, և

Կանխիկով կապիտալի շահույթ, երբ հետևյալ հաշվարկի արդյունքում ստացվում է բացասական (-) նշանով մեծություն. կապիտալի վճարումներ կանխիկով կամ համարժեքով, գումարած բաժնետերերի վարկեր, այդ թվում՝ սուբորդինացված և ոչ սուբորդինացված վարկեր, հանած վճարված շահաբաժինները՝ առանց շահութաբաժինների նկատմամբ հաշվարկվող հարկերի, հանած բաժնետերերի վարկերի դիմաց վճարված տոկոսագումարները՝ առանց տոկոսների նկատմամբ կիրառվող հարկային պահումների, հանած բաժնետերերի վարկերի մարումները, հանած կանոնադրական կապիտալից նվազեցումները:

Վերոհիշյալ բանաձևով ստացվող ցանկացած գումար պետք է զերծ լինի ցանկացած հարկից, որը կարող է կիրառվել Վնասների հատուցման նկատմամբ, եթե այդպիսին կա: Այս նպատակով, եթե անհրաժեշտ է, Վնասների հատուցման գումարի հաշվարկը կտարվի համախառն սկզբունքով:

Կառավարիչ. «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.»՝ մինչև նշված կորպորացիայի կողմից (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ամբողջությամբ հսկվող և համարժեքորեն ֆինանսավորվող նրա հայաստանյան դուստր ընկերության ստեղծումը և գրանցումը, որի դեպքում Կառավարչի բոլոր իրավունքները և պարտականությունները վերագրվում և փոխանցվում են այդ գրանցված իրավաբանական անձին: Վերահսկող բաժնետեր լինելու պատճառով Կառավարչի նկատմամբ գործում են Արգենտինայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև 1993թ. ապրիլի 16-ին ստորագրված «Ներդրումների խթանման և պաշտպանության համաձայնագրի» առաջին բաժնի 2-րդ մասի գ կետի պահանջները կկիրառվեն:

Մաստեր-պլան. Ժամկետի ընթացքում Կառավարչի կողմից Օդանավակայանում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթուղթը, որը պետք է նախագծվի և հաստատվի X բաժնում նախատեսված կարգով: Մաստեր-պլանը պետք է համապատասխանի ICAO-ի անվտանգության չափանիշներին և IATA-ի կողմից սպասարկման «C» կարգի որակի մակարդակին:

Հուշագիր. ՀՀ կառավարության և «Corporacion America S. A.» ընկերության միջև 2001թ. սեպտեմբերի 22-ին ստորագրված Փոխըմբռնման հուշագիրը, որը կցվում է սույն Պայմանագրին որպես հավելված Գ, ինչպես նաև դրանում կատարված բոլոր փոփոխությունները:

Կողմեր. ՀՀ կառավարությունը և Կառավարիչը:

Տիրապետում. Ֆորմալ գործողություն, որի միջոցով Կառավարիչը վերահսկում է Օդանավակայանը և այդպիսով դառնում վերջինիս կառավարման և գործունեության պատասխանատուն:

Գույք. ցանկված տիպի և բնույթի միացյալ և առանձնացված բոլոր իրական, անձնական, խառը, նյութական և ոչ նյութական գույքի միավորները, որոնք ներկայումս և ապագայում մասն են կազմում Օդանավակայանի գործունեության՝

անկախ ներկայումս դրանց սեփականատիրոջ ով լինելուց, անկախ դրանց նկատմամբ գույքային իրավունքներ (այդ թվում՝ նաև օգտագործման իրավունք) ունեցող անձի կամ պետական մարմնի փաստից, այդ թվում, սակայն առանց սահմանափակման, Հավելված Դ-ում թվարկվածները. ներառյալ «Շինվերանորոգման վարչություն» ՓԲԸ-ի գույքը: Կասկածից խուսափելու համար սահմանվում է, որ հիմնական միջոցները համարվում են Գույքի մաս՝ ըստ հետևյալ չափորոշիչների, որոնք ընդ որում սպառիչ չեն. (i) դրանց ուղղակի օգտագործումն Օդանավակայանի գործունեության համար, (ii) այն փաստը, որ դրանց օգտագործումը գլխավորապես նախատեսված է Օդանավակայանի գործունեության համար, (iii) դրանց գտնվելն Օդանավակայանի սահմանագծերից ներս, (iv) այն փաստը, որ Կառավարչի բացառիկ հսկողությունը դրանց նկատմամբ անհրաժեշտ է, որպեսզի Օդանավակայանը Կառավարչի կողմից կառավարվի սույն Պայմանագրով նախատեսված կերպով, կամ (v) այլ ողջամիտ միջազգային չափանիշների համաձայն: Վերը թվարկված օրինակները չունեն որևէ գերադասություն կամ կարևորություն ըստ թվարկման հերթականության:

Հարկեր. Ցանկացած հարկ /ներառյալ եկամտահարկ, շահութահարկ, փոխարինողներ կամ հավելվող մինիմումներ, ակտիվներ, շրջանառություն, ֆրենչայզ, լիցենզիա, կապիտալ, ոչ նյութական ակտիվներ, ծառայություններ, հավելավճար, փոխանցում, վաճառք, օգտագործում, արժեքի ավելացում, աշխատավարձ, ռոճիկ, աշխատանքից ազատման դեպքում տրվող միանվագ վճարում, զբաղվածություն, սոցիալական ապահովություն, աշխատանքային թոշակ, մասնագիտական, գույքային /անշարժ և շարժական/, շահույթներ, ներմուծում, ակցիզներ, մաքսատուրքեր, դրոշմներ, պահում կամ գնահատվող հարկեր/, վճարներ, տուրքեր, ներառյալ մաքսատուրքեր, գնահատումներ, պահումներ, կամ ցանկացած բնույթի պետական գանձույթներ, ներառյալ նաև բոլոր այն հարկերը, որոնք պետք է գանձվեին և որևէ պետական մարմնի վճարվեին երրորդ անձանց անունից /այդ թվում նաև՝ որպես հարկային գործակալ, ընդունող գործակալ, կոմիսիոն գործակալ կամ միջնորդ հանդիսանալուց բխող հարկային պարտավորությունները/, այդ թվում՝ տոկոսագումարների, փոփոխությունների, տույժերի կամ հավելումների մասով:

Ժամկետ. Սույնի VI բաժնով նախատեսված կոնցեսիայի ժամկետը, ներառյալ՝ բոլոր երկարացումները:

Օգտագործողներ - Բոլոր այն անձիք՝ թե ֆիզիկական, և թե իրավաբանական, ներառյալ պետական մարմինները և պետական ընկերությունները, որոնք օգտվում են Օդանավակայանի շինություններից և ծառայություններից:

3.2. Բոլոր այն հասկացությունները և տերմինները, որոնք սահմանված չեն 3.1. բաժնում, պետք է մեկնաբանվեն՝ ելնելով ICAO-ի և IATA-ի կողմից օգտագործվող ընդհանուր մեկնաբանումների հիման վրա:

IV. Մեկնաբանում

4.1 Սույն պայմանագիրը մեկնաբանվում է միացյալ ձևով, և առանձին դրույթներ չեն մեկնաբանվում Պայմանագրի ամբողջական կոնտեքստից առանձին, եթե այլ բան չի նախատեսված:

4.2 Սույն Պայմանագիրը /ներառյալ դրան առնչվող փաստաթղթերը/, հանդիսանում է Կողմերի կամարտահայտությունը հավաստող փաստաթուղթ և գերակայում է սույնի ստորագրումից առաջ Կողմերի միջև կնքված գրավոր կամ բանավոր համաձայնագրերի նկատմամբ՝ այն չափով, որքանով դրանք առնչվում են սույն Պայմանագրում արծարծված խնդիրներին: Բացառություն են կազմում Փոխըմբռնման հուշագրի 15, 17, 18, 20, և 21 բաժինները:

4.3 Սույն Պայմանագրում առանձին դրույթների և բաժինների համարակալումը և հերթականությունը չի նշանակում դրանցից որոշների գերակայությունը այլոց նկատմամբ:

4.4 Սույն Պայմանագրում նշված վերնագրերը նախատեսված են միմիայն աշխատանքը հեշտացնելու նպատակով և չեն կարող ներգործություն ունենալ դրանց կոնտեքստի մեկնաբանման վրա:

4.5 «Օրերին» վերաբերվող նշումները մեկնաբանվում են որպես վարչական աշխատանքային օրեր, եթե այլ բան կոնկրետ նշված չէ:

V. Նպատակը

5.1 Սույնով ՀՀ կառավարությունը Կառավարչին տալիս է բացառիկ իրավունք՝ ղեկավարել, շահագործել Օդանավակայանը և գործունեություն կազմակերպել Օդանավակայանում, և այդ կապակցությամբ ՀՀ Կառավարությունը Կառավարչին տալիս է բացառիկ իրավունք՝ օգտագործելու Օդանավակայանը և Գույքը, և իրականացնել Օդանավակայանին առնչվող ցանկացած առևտրային գործունեություն, բացառությամբ այն առևտրային գործունեության տեսակների և այն գույքի, որոնք կոնկրետ կերպով բացառվում են համաձայն սույն Պայմանագրի: Նշված իրավունքները տալը նշանակում է, որ Կառավարչին տրվում են 5.3 կետով նախատեսված լիցենզիաները, և որ ՀՀ Կառավարությունը Կառավարչին փոխանցում է Օդանավակայանի կառավարմանն առնչվող բոլոր գործառույթները (կառավարում այն իմաստով, որ բացատրված է սույն Պայմանագրով և վերջինիս համաձայն իրականացվում է Կառավարչի կողմից Տիրապետումից սկսած)՝ բացառությամբ պետական կարգավորիչ գործառույթների, ընդ որում՝ փոխանցվում են կառավարմանն առնչվող բոլոր այն գործառույթները, որոնք նախկինում իրականացվում էին Ընկերությունների և այլ պետական կամ մասնավոր անձանց կողմից, ինչպես նաև՝ Օդանավակայանի ղեկավարման իրավասու մարմնի կողմից իրականացվողները:

Կառավարիչը պարտավոր չէ սույն Պայմանագրով նախատեսված իրավունքների տրման դիմաց վճարել որևէ վճար կամ այլ կարգի հատուցում. սույն ազատումը չի վերաբերում Հայաստանի օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված սովորական վճարների նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ, 5.6 կետում նշված լիցենզիաների համար դիմելու դեպքում կիրառվող վճարները:

5.2 Չսահմանափակելով սույնի 5.1. կետում նշված սկզբունքը, Կառավարիչը բացառիկ իրավունք ունի ղեկավարել և շահագործել Օդանավակայանին առնչվող ներքոնշյալ գործունեության տեսակները, որոնց ցանկը, սակայն, սպառիչ չէ՝

Ավիացիոն ծառայություններ

ա. օդանավերի ուղեկցման ծառայություններ,
բ. կանգառների կառավարում,
գ. շարժական և մեխանիկական ստանդուղքների ներդրում և գործարկում,
դ. տելեսկոպ կամուրջ,
ե. վերգետնյա սպասարկման ծառայություններ, այդ թվում՝ օդանավեր քարշակելու ծառայություն,
զ. էլեկտրոէներգիայի մատակարարման ծառայություններ,
է. տեխնիկո-կազմակերպչական ծառայություններ,
ը. ավիացիոն անվտանգություն և օդանավերի պահպանման ծառայություններ,
թ. օդանավերի կոմունալ ծառայություններ,
ժ. վառելիքի և հեղուկների մատակարարում,
ի. հատուկ անիվավոր փոխադրամիջոցներով մատուցվող ծառայություններ,

Առևտրային

լ. առևտրային նպատակներով վերգետնյա տարածքների վարձակալություն,
խ. գովազդ,
ծ. անմաքս առևտրի խանութներ,
կ. առևտրական կենտրոններ,
հ. բանկային և տարադրամի փոխանակման կետեր, ֆինանսական ծառայություններ
ձ. հյուրանոցներ
ղ. ռեստորաններ, սրճարաններ, սննդի կետեր,
ճ. մաքսավճարով աշխատող խանութներ, օրինակ՝ հագուստ և պիտույքներ, թերթերի և լրագրերի վաճառքի կետեր,
մ. խաղատներ և ժամանցի այլ օբյեկտներ,
յ. մեքենաների կայանատեղեր,
ն. ուղեբեռի սայլակներ և անվտանգ պահատեղիներ,
շ. հեռահաղորդակցության ծառայություններ, որոնք թույլատրված են թիվ 60 լիցենզիայով,
ռ. VIP ծառայություններ,
չ. սննդի օբյեկտներ,
պ. ավտոմեքենաների բենզալցակայաններ:

Այլ

(aa) մաքսային պահեստներ,
(bb) միջզոնային տեխնիկական հարթակներ,
(cc) ազատ գոտիներ,
(dd) վերգետնյա տրանսպորտ,
(ee) այլ՝ չարգելված ծառայություններ, որոնք օգտակար կամ լրացնող են Օդանավակայանի օդագնացային գործունեության և/կամ առևտրային զարգացման համար, այդ թվում, սակայն ոչ միայն, Օդանավակայանի հետ կապված գործունեության տեսակներ, օրինակ՝ դահլիճներ, արվեստի և ցուցահանդեսների կենտրոններ, հյուրանոցներ և ժամանցի և տուրիստական այլ գործունեության տեսակներ և տրանսպորտ, որոնք բոլորը կարող են իրականացվել Օդավանակայանից դուրս: Օդավանավակայանից դուրս կատարվող գործունեության մասով ներդրումները կամ շահութաբերությունը հաշվի չեն առնվում Ներքին շահութաբերության հաշվարկներում:

5.3. Պայմանագրի հաստատումը ՀՀ Կառավարության կողմից նշանակում է, որ Կառավարչին տրվում են 5.2 կետում (ա-ի) թվարկված ավիացիոն ծառայություններ մատուցելու համար պահանջվող բոլոր լիցենզիաները, ինչպես նաև այն ավիացիոն ծառայությունները մատուցելու համար պահանջվող լիցենզիաները, որոնք կարող են ստեղծվել, զարգացվել կամ իրականացվել ապագայում՝ գոյություն ունեցող ծառայությունների կամ ընթացակարգերի աստիճանական զարգացման արդյունքում, կամ՝ գոյություն ունեցող ծառայությունները կամ ընթացակարգերը փոխարինելու կամ լրացնելու միջոցով:

5.4. Տիրապետման օրվա դրությամբ ՀՀ Կառավարությունը պետք է Կառավարչին տրամադրած լինի 5.2.ծ կետում նշված գործունեությունն իրականացնելու համար պահանջվող լիցենզիան: Այդ առումով ՀՀ Կառավարությունը իր կողմից հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը փոփոխության ենթարկի 2001թ. մայիսի 30-ին ընդունված լիցենզավորման մասին օրենքը:

5.5. Մաստեր-պլանի և վերջինիս փոփոխությունների կամ լրացումների հաստատումը հավասարազոր կլինի շինարարության և կառուցման նպատակով անհրաժեշտ բոլոր լիցենզիաների տրամադրմանը:

5.6. Անկախ սույն V հոդվածի որևէ այլ դրույթից՝ 5.2 կետի (h), (մ), (շ), (պ) և (aa) ենթակետերում թվարկված իրավունքների նկատմամբ գործում են համապատասխան օրենքների դրույթները: ՀՀ Կառավարությունը Հայաստանի օրենսդրության սահմաններում թույլատրելի հնարավոր առավելագույն սահմաններում օգնելու է Կառավարչին նշված գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիաներն ստանալու հարցում:

Ի թիվս այլ միջոցառումների, ՀՀ Կառավարությունը պարտավոր է նշանակել Կառավարության լիազոր ներկայացուցչի, որը կապող օղակ է հանդիսանալու

պետական համապատասխան մարմինների, ինչպես նաև վերջիններիս և Կառավարչի միջև:

5.7. Կառավարիչն ընդունում է ի գիտություն, որ թիվ 60 լիցենզիան հանրային հեռահաղորդակցության ծառայությունների բացառիկ իրավունք է տալիս Արմենթելին, և նշված ոլորտում ցանկացած առևտրային գործունեություն ենթակա է տվյալ լիցենզիայի պայմաններին: Արմենթելի լիցենզիան արգելք չի հանդիսանա, որպեսզի Կառավարիչը տեղադրի, պահպանի և շահագործի մալուխային կամ անմալուխ հեռահաղորդակցության համակարգեր Կառավարչի մասնավոր օգտագործման և/կամ Օդանավակայանի նպատակների համար: Ամեն պարագայում, Արմենթելը պարտավոր է համապատասխան Վճարներ մուծի Օդավանակայանի ներսում իր ծառայությունների մատուցման համար օգտագործվող տարածքի համար:

5.8. Օդային երթևեկության հսկողության գործունեությունն ընդգրկված չէ սույն Պայմանագրում: Հետևաբար, Կառավարիչը պատասխանատու չի լինի մոտեցման, կայանման, թռիչքային գործունեության կամ օդային երթևեկության հսկողությանն առնչվող որևէ այլ աշխատանքի համար: ՀՀ Կառավարությունը պարտավոր է ապահովել օդային երթևեկության հսկողության ծառայությունների անընդհատ մատուցումը:

5.9. Կառավարիչը չպետք է համարվի Ընկերությունների կամ Օդավանակայանում գործունեություն իրականացնող կամ իրավասություններ ունեցող պետական կամ մասնավոր մարմնի իրավահաջորդ Կառավարության կամ երրորդ անձանց (այդ թվում՝ Ընկերությունների աշխատողների) նկատմամբ դրանց կուտակած հնարավոր պարտքերի կամ պարտավորությունների առումով:

Կառավարությունը Կառավարչին զերծ և անվնաս կպահի այն Բացասական հետևանքներից, որոնցից Կառավարիչը կարող է տուժել Ընկերությունների կամ Օդավանակայանում գործունեություն իրականացնող կամ իրավասություններ ունեցող պետական կամ մասնավոր մարմնի գործունեության, իրավունքների և պարտավորությունների կապակցությամբ՝ պայմանով, որ Կառավարչի դեմ երրորդ անձանց հայցերը քննվեն դատարանի, պետական մարմնի կամ արբիտրաժային դատարանի կողմից կամ Հայաստանի Հանրապետությունում, կամ որևէ այլ երկրում՝ անկախ արդեն իսկ ներկայացված և վարույթի մեջ գտնվող հայցերից և բողոքներից, և չանդրադառնալով XXI բաժնով Կառավարությանը վերապահված իրավունքների վրա, կամ՝ Կառավարության պատասխանատվությունը որոշվում է XXI բաժնով նախատեսված արբիտրաժային վարույթի միջոցով:

5.10. Սույնով տրվող իրավունքը որևէ պարագայում չպետք է Կառավարչին հետ կանգնեցնի Հայաստանի Հանրապետության տարածքում այլ գործունեությամբ զբաղվելուց:

VI. Ժամկետը

6.1 Սույն Պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում և գործողության մեջ մտնում Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ուժի մեջ մնալով Տիրապետում ստանալուց հետո երեսուն տարվա ընթացքում:

6.2 Եթե Կառավարչի գործերը գտնվում են լավ վիճակում, ապա Կառավարիչը հնարավորություն ունի իր բացառիկ հայեցողությամբՏիրապետման առաջին և հետագա յուրաքանչյուր հնգամյա ժամկետի ժամկետի ավարտից 6 (վեց) ամիս առաջ լրացող օրվա դրությամբ անորոշ տևողությամբ երկարաձգել Պայմանագիրը յուրաքանչյուր անգամ հինգ (5) տարի ժամկետով՝ սկսած 6.1 կետում մատնանշված ժամկետի և դրա յուրաքանչյուր երկարաձգման ավարտից:

Կառավարիչը կարող է իր այս հնարավորության գործադրումն սկսել Տիրապետում ստանալու առաջին և հաջորդող յուրաքանչյուր հնգամյա ժամկետի ավարտից վեց ամիս առաջ:

Երկարաձգված յուրաքանչյուր նոր ժամկետի կապակցությամբ Կառավարիչը թարմացնելու է Մաստեր-պլանը 10.3 կետում նախատեսված կարգով:

Բացառությամբ եթե գործում է Պայմանագրի վաղ դադարեցման կամ Մաստեր-պլանի վերանայման կոնկրետ դրույթ, ապա Մաստեր-պլանի՝ 6.2 կետի համաձայն թարմացված տարբերակի մերժումը նշանակում է, որ Ժամկետն ավարտվում է 6.1 կետում սահմանված բուն ժամկետի ավարտին կամ վերջին անգամ երկարաձգելիս Մաստեր-պլանի հաստատման կապակցությամբ նշվող ժամկետի ավարտին: Նման պարագայում Մաստեր-պլանի վերջին թարմացված տարբերակը մնում է ուժի մեջ մինչև Պայմանագրի դադարումը:

VII. Կառավարչի իրավունքները և պարտականությունները

7.1. Կառավարիչն իրավունք ունի.

(i) Ինքնուրույն կամ երրորդ անձանց միջոցով իրականացնել 5.2 բաժնով նախատեսված առևտրային գործունեությունը:

(ii) Երրորդ անձանց իրավունք տալ օգտագործել վերգետնյա տարածքի որոշ մասեր՝ իրականացնելու այն առևտրային գործունեությունը, որի թույլտվությունը կարող է տալ Կառավարիչն անվճար կամ որևէ այլ հիմունքներով՝ փաստաթղթով կամ պայմանագրով, կամ Կառավարչի կողմից նպատակահարմար համարվող այլ միջոցով: Բոլոր ընդհանուր ծախսերը, ինչպիսիք են աղբի հավաքումը, օդի զովացումը, ջեռուցումը, լուսավորումը, անվտանգությունը և սանիտարական ծառայությունները, և կոմունալ-կենցաղային ծախսերը, ինչպիսիք են էլեկտրաէներգիան, հեռախոսը, ջուրը, ջրմուղը և գազը, ինչպես նաև լրացուցիչ ծառայությունները, այդ թվում՝ Կառավարչի կողմից տրամադրված վերգետնյա տարածքների հատուկ

մաքրումը, անվտանգությունը և պահպանումը, հաշվեգրվելու են Օգտագործողներին:

(iii) Զարգացնել զբոսաշրջությանն առնչվող գործունեության տեսակներ:

(iv) Կազմակերպել և շահագործել ազատ գոտի: Այս առումով Կառավարությունն ընդունելու է համապատասխան բոլոր մաքսային օրենքները և իրավական ակտերը, որոնք թույլ կտան Կառավարչին բացել ազատ գոտի Տիրապետման օրվա դրությամբ:

(v) Պայմանագիր կնքել օդանավակայանի օպերատորի հետ, որը կգործի որպես Կառավարչի տեխնիկական խորհրդատու Օդանավակայանի գործունեության մասով, ինչպես նաև՝ փոխարինել նշված օպերատորին և ցանկացած պահի դադարեցնել նրա հետ կնքված համապատասխան պայմանագիրը: Կառավարիչն իրավասու է ազատ կերպով պայմանագիր կնքել օդանավակայանների հետևյալ օպերատորներից ցանկացածի հետ. Aeropuertos Argentina 2000 S.A., Societa Esercizi Aeroportuali S.p.A., Aeropuerto del Neuquen S.A., կամ դրանց կողմից վերահսկվող ցանկացած այլ ընկերություն կամ ընկերություններ, կամ՝ դրանց կողմից ընդհանուր վերահսկողության ենթարկվող ցանկացած այլ ընկերություն: Կառավարիչն իրավունք չունի առանց ՀՀ Կառավարությունից նախապես թույլտվություն ստանալու պայմանագիր կնքել օդանավակայանի որևէ այլ օպերատորի հետ, ընդ որում՝ թույլտվությունն անողջամտորեն չի մերժվի, բացառությամբ եթե Կառավարիչը վերահսկում է համապատասխան օդավանակայանի օպերատորին, վերահսկվում է վերջինիս կողմից կամ գտնվում է վերջինիս ընդհանուր վերահսկողության տակ: Սույն պարբերության առումով «վերահսկողություն» բառն ունի այն իմաստը, որը մատնանշված է 7.2 կետի (vii) ենթակետում:

(vi) Օգտագործել «Զվարթնոց» բառն իր կորպորատիվ անվանման մեջ և/կամ օգտագործել այն Օդավանակայանի ծառայությունների կապակցությամբ, համապատասխան մտավոր սեփականության բոլոր բացառիկ իրավունքներով հանդերձ: Նշված բացառիկությունը չի տարածվում «Զվարթնոց» բառի այն գործածությունների նկատմամբ, որոնք չեն առնչվում Օդանավակայանին, Օդանավակայանային գործունեությանը կամ սույն Պայմանագրին:

(vii) Իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած այլ գործունեություն:

7.2. Կառավարիչը պարտավոր է.

(i) Տիրապետման օրվանից սկսած և ողջ ժամկետի ընթացքում իրականացնել և երաշխավորել ավիացիոն ծառայությունների բնականոն և անընդհատ մատուցումը՝ անկախ IX, 12.8 և XVIII բաժիններով Կառավարչին վերապահված իրավունքներից,

(ii) կառավարել և շահագործել Օդանավակայանն օդանավակայանների միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան,

(iii) կատարել X բաժնում նշված Մաստեր-Պլանի պահանջները և պայմանները,

(iv) իր սեփական ծախսերով և ռիսկով ձեռք բերել համարժեք ֆինանսավորում և կառավարչական ռեսուրսներ՝ արդիականացնելու Օդանավակայանի ֆիզիկական ենթակառույցները, վերջիններս հասցնելու ժամանակակից չափանիշների և բարելավելու կառավարման որակը,

(v) Կառավարությանը վերգետնյա տարածք հատկացնել, որն անհրաժեշտ է մաքսային, միգրացիոն, պաշտպանության, անվտանգության, ապահովության, ֆիտոկենսասանիտարական և բրոմատոլոգիական հսկողության և հանրային առողջապահության գործունեության համար, եթե վերջիններս կան և կմնան որպես չփոխանցվող գործունեության տեսակներ, որոնք կատարելու են Կառավարության մարմինները և գերատեսչությունները՝ համապատասխան Մաստեր-Պլանի: Եթե ՀՀ Կառավարությունը որոշի, որ վերոհիշյալ գործունեության տեսակներից որևէ մեկն իրականացվելու է մասնավոր անձի կողմից՝ համաձայն ՀՀ Կառավարության մարմինների կամ գերատեսչությունների հետ կնքված պայմանագրի կամ վերջիններիս կողմից տրված լիազորությունների, ապա Կառավարիչն ունի տվյալ գործունեության իրականացման առումով նախապատվության իրավունք, ընդ որում՝ վերջինս պետք է կիրառվի երրորդ անձի հետ կապված մրցույթի հայտարարումից հետո երեսուն (30) օրվա ժամկետի ընթացքում: Կառավարչի նախապատվության իրավունքը կազմված է համապատասխան պայմանագրի կնքման իրավունքից, պայմանով, որ Կառավարչի կողմից առաջարկվեն պայմաններ, որոնք էապես համարժեք լինեն լավագույն պայմաններ առաջարկող մրցույթի մասնակցի առաջարկած պայմաններին:

(vi) Կառավարությանը տարեկան հաշվետվություն (ինչպես նաև Կառավարության կողմից ողջամտորեն պահանջվող այլ հաշվետվություն) ներկայացնել օդանավակայանի կառավարման, շահագործման և գործունեության զարգացման վերաբերյալ, որտեղ ընգրկված պետք է լինեն տվյալներ օդային երթևեկության, հասույթների և ներդրումների վերաբերյալ:

(vii) կառավարել, աշխատացնել և շահագործել Օդանավակայանի գործունեությունը բացառիկ կարգով՝ ուղղակիորեն կամ երրորդ անձանց հետ պայմանագրերով: Կառավարիչը 5.2 կետի ա-ի ենթակետորում թվարկված ավիացիոն ծառայությունների ղեկավարման և շահագործման ենթակոնցեսիաներ չի կարող տալ առանց նախապես Կառավարության թույլտվությունը ստանալու, ընդ որում՝ վերջինս անողջամտորեն չի մերժվի, բացառությամբ եթե Կառավարիչը ենթակոնցեսիոների քվեարկության իրավունք տվող բաժնետոմսերի ավելի քան կեսի սեփականատերն է, կամ եթե ի վիճակի է օրենքով չարգելված այլ եղանակներով կանխորոշել համապատասխան ենթակոնցեսիոների որոշումները: Օդանավակայանի գործունեության բոլոր մյուս տեսակների ղեկավարման և շահագործման

ենթակոնցեսիաների համար որևիցե թույլտվություններ կամ համաձայնություններ չեն պահանջվի, բացառությամբ եթե հանրային առողջության կամ անվտանգության համար օրենքով այլ բան է պահանջվում՝ համաձայն 5.3-5.6 կետերի, որոնք գործում են նշված ենթակոնցեսիոների նկատմամբ:

(viii) Բոլոր Օգտագործողներից (այդ թվում՝ ավիաընկերություններից, Օդանավակայանում գործունեություն կամ իրավասություններ իրականացնող բոլոր այլ պետական կամ մասնավոր անձանցից) գանձել համապատասխան Օդանավակայանային վճար, որը նախատեսված է Առդիր Բ-ում սահմանված սակագնային աղյուսակով, ինչպես նաև Կառավարչի կողմից սահմանվելիք Վճարներ:

(ix) Կառուցել, պահպանել և/կամ շահագործել՝ ինքնուրույն կամ երրորդ անձանց միջոցով, անգարներ, վառելիքի պահեստներ կամ օդանավերի պահեստամասերի արտադրամասեր, մաքսային պահեստներ և/կամ այլ պահեստներ կամ տարածքներ, որոնք կապված են բեռների կամ, ընդհանրապես, օդագնացային գործունեության կազմակերպմանը՝ համաձայն X բաժնի:

7.3. Սույն Պայմանագրի բոլոր առումներով Բացառիկություն (բացառիկ իրավունք/-ներ) նշանակում է, որ որևիցե ֆիզիկական կամ իրավաբանական անձ չպետք է կարողանա Պայմանագրով նախատեսված գործունեությունն առանց Կառավարչից նախապես ստացված բացահայտ թույլտվության:

VIII. Կառավարության իրավունքները և պարտականությունները

8.1. Կառավարությունը պարտավոր է.

(i) երաշխավորել, որ Կառավարիչն իրավունք կունենա բառառիկության կարգով իրականացնել Օդանավակայանի ղեկավարում, շահագործում և գործունեության կազմակերպում սույն Պայմանագրով նախատեսված ժամկետում և պայմաններով,

(ii) անկախ ՀՀ Կառավարության առավել կոնկրետ պարտավորությունների մասին սույն Պայմանագրով նախատեսվող դրույթներից՝ ՀՀ Կառավարությունը պարտավոր է կատարել բոլոր ողջամիտ և անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները, որպեսզի անհապաղ և լիարժեքորեն գործադրվեն Կառավարչին սույն Պայմանագրով շնորհված իրավունքները: Բացի այդ, ՀՀ Կառավարությունը պարտավոր է ընդունել կամ ուժը կորցրած ճանաչել բոլոր այն իրավական ակտերը, որոնք իրավաբանորեն կարող է ընդունել կամ ուժը կորցրած ճանաչել՝ եվրացնելու այն իրավական խոչընդոտները, որոնք ներկայումս կամ ապագայում կարող են բացասաբար և էապես անդրադառնալ (ա) վերը նշված իրավունքներից օգտվելու վրա կամ (բ) նշված իրավունքներից օգտվելը դարձնել ավելի ծանր և դժվար՝ սահմանափակելով որոշակի

գործողություններ, հնարավորություն չտալով նշված իրավունքներից լիովին օգտվելու համար կամ սահմանելով պահանջներ, որոնք հակասում են Կառավարչի ողջամիտ ակնկալիքներին, որոնք հիմնված են ՀՀ Կառավարության կողմից տրված երաշխիքների և հավաստիացումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անցյալի և ներկայիս իրավական ակտերի և սովորույթների վրա: Այնքանով, որքանով անհրաժեշտ է ընդունել կամ ուժը կորցրած ճանաչել օրենքներ, ՀՀ Կառավարությունը կանի հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու անհրաժեշտ օրենքների ընդունումը կամ ուժը կորցրած ճանաչումը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից:

(iii) Տիրապետման օրվանից սկսած համագործակցել Կառավարչի հետ՝ Հայաստանի օրենսդրությամբ թույլատրվածի սահմաններում հնավորին առավելագույնս, որպեսզի Օդանավակայանի տարածքից անհապաղ հեռացվեն պայմանները չկատարող կամ Կառավարչի թույլտվությունը չստացած վարձակալները, արտոնագրված անձիք և այլ Օգտագործողները, նույնիսկ եթե դա արվելու է համապատասխան դատարանների կողմից թույլատրված հանրային ուժի գործադրմամբ: Վերոգրյալից բացի, Կառավարիչն իրավունք կունենա վերականգնել պատճառված ընդհանուր վնասի գումարային տարբերությունը վնասը պատճառող անձից կամ տվյալ անձի կողմից իրականացվող գործունեության երաշխավոր հանդիսացող այլ անձից:

(iv) Երաշխավորել, որ կապահովվի, կպահպանվի և կբարելավվի Անհրաժեշտ ենթակառույցը՝ ապահովելու Օդանավակայանային գործունեության և Օդանավակայանի գործառույթների բնականոն և անընդհատ իրականացումն Օդանավակայանի ընդլայնմանը զուգընթաց՝ համաձայն միջազգայնորեն ընդունված չափանիշների և գործելաոճերի: Անհրաժեշտ ենթակառուցվածքիս պահպանումը, բարեկարգումը և ապահովումը չի ազդի օդագնացային գործունեության կամ Օդանավակայանի գործունեության վրա:

(v) Մատուցել եղանակի մասին տեղեկությունների, հանրային առողջապահության և օդանավերի և ենթակառույցների հակահրդեհային պաշտպանության ծառայություններ՝ համապատասխան միջազգային օդանավակայանների չափանիշների, որը չպետք է որևիցե կերպ ազդի իր կողմից իրականացվելիք մյուս աշխատանքների, այն է՝ միգրացիայի, մաքսային, ֆիտոկենսասանիտարական և բրոմատոլոգիական հսկողության և այլ աշխատանքների վրա, որոնք չեն փոխանցվում Կառավարչին:

(vi) Իրականացնել ողջամիտ և անհրաժեշտ իրավական ակտեր՝ ապահովելու Օգտագործողների տեղափոխումը Օդանավակայան և Օդանավակայանից արդիական, արդյունավետ և ֆինանսական տեսակետից ձեռնտու տրանսպորտային միջոցներով: Կառավարությունն իրականացնելու է բոլոր այն ողջամիտ գործողությունները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի Կառավարիչն իրավունք ստանա կազմակերպել և շահագործել տրանսպորտային ծառայություններ ազատ և մրցակցային շուկայի

պայմաններում և երրորդ անձանց իրավունք տա կազմակերպել և շահագործել նման ծառայություններ սկսած Տիրապետման օրվանից:

(vii) Եթե Կառավարությունը որոշի մասնավոր սեկտորին հանձնել ներկայումս գոյություն ունեցող կամ կառուցվելիք որևիցե այլ տեղական և/կամ միջազգային օդանավակայանի շինարարությունը, պահպանումը, կատարելագործումը, ընդարձակումը, ղեկավարումը, շահագործումը և գործունեությունը, ապա Կառավարիչը տվյալ աշխատանքները կատարելու նախապատվության իրավունք կունենա՝ սակայն միայն ՀՀ Կառավարության կողմից սահմանված պայմաններով, ընդ որում՝ նշված իրավունքը պետք է իրագործվի երրորդ անձի կողմից որևէ մրցույթի կամ հայտի հայտարարումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում: Կառավարչի նախապատվության իրավունքը կընդգրկի համապատասխան պայմանագիր կնքելու իրավունքը, պայմանով, որ Կառավարիչն առաջարկի պայմաններ, որոնք նյութապես համարժեք կլինեն լավագույն հայտեր ներկայացնողների առաջարկած պայմաններին: Եթե ՀՀ Կառավարությունը ուղղակիորեն կամ երրորդ անձանց հետ կնքվող պայմանագրի միջոցով. (ա) կառուցում է Օդանավակայանից բացի որևէ այլ միջազգային օդանավակայան Հայաստանի Հանրապետության տարածքում կամ գոյություն ունեցող օդանավակայաններից որևէ մեկը դարձնել միջազգային օդանավակայան, կամ (բ) կառուցում է տեղական նշանակության օդանավակայան Օդանավակայանից երկու հարյուր հիսուն (250) կիլոմետր շառավղով հեռավորության վրա, ապա նշված շինարարության սկսվելու պահից մինչև ավարտին հաջորդող մեկ տարվա ավարտի պահը Կառավարիչն իրավունք ունի դադարեցնել սույն Պայմանագիրը 18.7 կետի համաձայն և համապատասխան հատուցում ստանալ ՀՀ Կառավարությունից:

Կողմերն ընդունում են ի գիտություն, որ Գյումրու օդանավակայանը սպասարկում է թռիչքներ ԱՊՀ երկրներ: Գյումրու օդանավակայանը բացի ԱՊՀ երկրներ թռիչքներից միջազգային թռիչքներ սպասարկել չի կարող:

(viii) Խոչընդոտել և/կամ թույլ չտալ, որպեսզի Առդիր Բ-ում սահմանված սակագնային աղյուսակով նախատեսված կամ Պայմանագրի և համապատասխան օրենքների և իրավական ակտերի համաձայն այլ կերպ հաշվարկվող և վճարման ենթակա Ավիացիոն վճարների գծով ժամկետանց պարտքեր ունեցող ավիաընկերությունները թռիչքներ կատարեն միայն պարտքեր ունենալու պայմանի առկայության դեպքում, ինչպես նաև՝ ձեռնարկել 12.8 բաժնով նախատեսված բոլոր մյուս քայլերը:

(ix) Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը և կատարել բոլոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում սույնով երաշխավորված ներքին շահութաբերության մակարդակ ապահովելու համար:

(x) Ողջամիտ համագործակցություն ցուցաբերել Կառավարչին՝ ֆինանսավորում, այդ թվում՝ առկայության դեպքում, արտոնյալ պայմաններով վարկավորում ստանալու միջազգային ֆինանսական հաստատություններից:

(xi) Կառավարությունը ֆինանսական պատասխանատվություն կամ ռիսկ չի ստանձնելու՝ բացառությամբ Կառավարչին թույլ տալու, որպեսզի վերջինս գրավադրի կամ այլ կերպ ծանրաբեռնի Գույքը՝ նախապես ստանալով Կառավարության համաձայնությունը, ընդ որում՝ վերջինս անհիմն կերպով չի մերժվի, ինչպես նաև՝ գրավադրել (մասամբ կամ ամբողջությամբ) Կառավարչի իրավունքը՝ գանձելու Օդանավակայանի վճարներ կամ Մուծումներ այնպես, ինչպես Կառավարիչն անհրաժեշտ կամ հարմար կգտնի՝ բոլոր առումներով համաձայն համապատասխան օրենքների:

(xii) Ապահովել փրկարար և հրշեջ ջոկատ և պայմաններ՝ համաձայն հետևյալ չափանիշների. ICAO-Հավելված 14, գլուխ 9, «Հրատապ և այլ ծառայություններ», ինչպես նաև՝ ICAO-ի հարակից ձեռնարկներ: Կառավարությունը պարտավոր է բարելավել փրկարար և հրշեջ ջոկատի չափանիշները և բարձրացնել փրկարարության և հրշեջ գործունեության համար հատկացվող միջոցները՝ արդյունավետորեն ապահովելու անվտանգություն Օդանավակայանի տարածքում Կառավարչի կողմից Մաստեր-պլանն իրականացնելու ընթացքում: Եթե սույն կետի համաձայն նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման ընթացքում ՀՀ Կառավարության մոտ առաջանում են ֆինանսական դժվարություններ, Կառավարիչը պարտավոր է համագործակցել ՀՀ Կառավարության հետ՝ գտնելու նշված նպատակի կատարման հարմար միջոց:

(xiii) Մատնանշել և շահագործել այլընտրանքային օդանավակայաններ յուրաքանչյուր անգամ, երբ Կառավարիչը ժամանակավորապես կասեցնում է Օդանավակայանի աշխատանքները՝ կատարելու աշխատանքներ, կամ որևէ այլ պատճառով, որը կասեցման կարիք կզգա Կառավարչի բացառիկ հայեցողությամբ, և յուրաքանչյուր անգամ, երբ Կառավարության իրավասու մարմինը կկասեցնի Օդանավակայանի գործունեությունը դժբախտ պատահարի կամ որևէ այլ պատճառով, որը հիմնավորում է օրենքի համաձայն Օդանավակայանի գործունեության կասեցումը:

(xiv) ՀՀ Կառավարությունը պարտավոր է գանձել և իրեն պահել պետական օդային տուրքի գումարները, որոնք կիրառվում են օդային տրանսպորտով Հայաստանի Հանրապետությունից մեկնող անհատների նկատմամբ:

8.2. Կառավարությունն իրավասու է մոնիտորինգի ենթարկել Կառավարչի կողմից խոստացված ծրագրերի իրագործումը Կառավարչի կողմից:

IX. Ֆորս Մաժոր

9.1 Եթե առաջանա Ֆորս-Մաժորային իրավիճակ, հետևանքներից տուժող կողմը պետք է Ֆորս-Մաժորային հանգամանքն առաջանալուց հետո քսանչորս ժամվա ընթացքում մյուս կողմին ծանուցի իրավիճակի հանգամանքների, ինչպես նաև՝

չկատարված պարտավորությունների կատարման ակնկալվող ժամկետների և պայմանների մասին:

9.2 Ֆորս-Մաժորային իրավիճակի վերանալու դեպքում կողմերը պետք է համագործակցեն՝ նվազագույնի հասցնելու հետևանքները և բնականոն հունի մեջ գցելու իրենց պարտավորությունների կատարման ընթացքը:

9.3 Եթե Ֆորս-Մաժորային իրավիճակն անընդհատաբար և էապես ազդում է կողմերի՝ սույն Պայմանագրի խնդիրների իրագործման կարողության վրա, ապա կողմերը պետք է բանակցեն՝ վաղաժամկետ դադարեցնելու Պայմանագիրն այն հիմքով, որ դադարեցումից հետո կողմերի պարտավորությունները կսահմանափակվեն Պայմանագրի կանգ առնելու հետ կապված պարտավորությունների փաստացի կատարմամբ կամ չկատարմամբ:

9.4 Ֆորս-Մաժորային իրավիճակի պատճառով պայմանների չկատարումը կողմերից ոչ մեկին իրավունք չի տալիս հայցեր ներկայացնել սույնի առնչությամբ:

X. Մաստեր-պլան

10.1 Կառավարիչը կազմելու է Մաստեր-Պլան և վերջինս ներկայացնելու է Կառավարության հաստատմանը Տիրապետումն ստանալուց հետո վեց (6) ամսվա ընթացքում:

10.2 Մաստեր-Պլանը նկարագրելու է այն աշխատանքները, որոնք կատարվելու են Ժամկետի առաջին հինգ տարիների ընթացքում՝ համապատասխան ներդրումների գումարների նախնական արժեքի գնահատմամբ, ինչպես նաև՝ սահմանելու է Ժամկետի մնացած մասի ընթացքում Օդանավակայանի բարեկարգման և պահպանման աշխատանքների և գործունեության ուղենիշեր:

Մաստեր-Պլանը և վերջինիս բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվելու են համաձայն երթևեկության ծանրաբեռնվածության կանխատեսումների, համաձայնեցված ներքին շահութաբերության մակարդակի, սպասարկման օբյեկտիվ կարիքների և այլ պայմանների, որոնք Կառավարիչը կարող է հարիր համարել համաձայն աշխարհի նմանատիպ օդանավակայաններում կիրառվող չափանիշների:

10.3 Մաստեր-Պլանը թարմացվելու է հինգ տարին մեկ անգամ՝ ընդգրկելու երեսնամյա ժամկետ: Մաստեր-Պլանը կարող է փոփոխվել Կառավարչի դիմումի հիման վրա՝ 12.9 կետով նախատեսված կարգով, կամ Օդանավակայանի կարիքների փոփոխությունների հիման վրա:

10.4 Եթե Կառավարությունը չի հաստատում Մաստեր-Պլանը Կառավարչի կողմից այն ներկայացնելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում, ապա Կողմերը պարտավոր են փորձել գտնել Մաստեր-պլանի փոխադարձաբար ընդունելի դրույթներ: Մինչև Մաստեր-պլանի հաստատումը Կառավարիչն իրավասու է

ղեկավարել, շահագործել և գործունեություն իրականացնել Օդանավակայանում՝ կատարելով ընթացիկ պահպանման այն աշխատանքները, որոնք խիստ անհրաժեշտ են ավիացիոն գործունեության համար: Կառավարությունը Մաստեր-Պլանը չի կարող մերժել անողջամտորեն կամ մեջբերելով պատճառներ, որոնք օբյեկտիվ տեխնիկական պատճառներ չեն և հանրային առողջապահության և անվտանգության կանոնակարգման արդյունք չեն:

10.5 Կառավարության կողմից Մաստեր-Պլանի և վերջինիս փոփոխությունների հաստատումը նշանակում է, որ տրվում են բոլոր թույլտվություններն ու լիցենզիաները՝ թե տեղական, և թե համազգային նշանակության, որոնք անհրաժեշտ են Մաստեր-Պլանով նախատեսված աշխատանքներն ի կատար ածելու համար:

10.6 Կառավարիչն իրավունք կունենա Մաստեր-Պլանով նախատեսված աշխատանքները դասել ըստ առաջնահերթությունների, հետաձգել կամ տեղափոխել դրանց նախապես հաստատված ժամկետները, և իր սեփական հայեցողությամբ կազմել համապատասխան ծրագրեր դրանց իրագործման համար՝ կարևորելով անվտանգության խնդիրները համաձայն ICAO-ի չափանիշների, և հաշվի առնելով IATA-ի C դասակարգով նախատեսված սպասարկման որակի աստիճանները:

Կառավարիչը պետք է Կառավարությանը տեղյակ պահի Մաստեր-Պլանում նկարագրված կոնկրետ աշխատանքների իրագործման և առաջընթացի մասին:

XI. Օդանավակայանի կարգավորումը

11.1 Կառավարիչը հանդես է գալու Օդանավակայանի ղեկավարման իրավասու մարմնի կարգավիճակով: Այդ կարգավիճակով Կառավարիչն իրավասու է նշանակել օդանավակայանի վարչակատարի (ադմինիստրատորի) և համապատասխան օրենսդրության շրջանակներում՝ Կառավարչի հայեցողությամբ և դատողությամբ, ընդունել Օդանավակայանը կարգավորող ակտեր՝ կարգավորելու բոլոր այն պետական կամ մասնավոր անձանց/հաստատությունների գործունեությունը, որոնք կարող են մուտք գործել Օդանավակայան և/կամ օգտագործել վերջինիս հարմարությունները և/կամ Օդանավակայանում տրամադրվող ծառայությունները, կամ՝ ուղղակի կամ անուղղակի հարաբերություններ ունենալ Օդանավակայանում զարգացվող գործունեության տեսակների հետ:

11.2 Օդանավակայանը սկզբնական շրջանում կարգավորող ակտերը գործողության մեջ կդրվեն Տիրապետում ստանալու օրվանից հետո հնարավորին չափ շուտ: Կառավարիչն իրավասու կլինի փոփոխել Օդանավակայանի կարգավորումը և ընդունել Օդանավակայանը կարգավորող նոր ակտեր իր սեփական հայեցողությամբ: Օդանավակայանում գործող նոր կարգավորող ակտերը և դրանց փոփոխություններն ուժի մեջ կմտնեն Կառավարությանը ծանուցվելու օրվանից:

11.3 Կառավարությունը Կառավարչին օժտում է ողջ իրավասությամբ, որն անհրաժեշտ է Օդանավակայանի կարգավորումն ի կատար ածելու համար: Կառավարությունը ցուցաբերելու է այս նպատակով անհրաժեշտ ողջ օժանդակությունը: Կառավարությունը Կառավարչին շնորհված բոլոր իրավասություններն ու իրավունքները դարձնելու է կիրարկելի Օգտագործողների և ցանկացած երրորդ անձի նկատմամբ:

XII. Ֆինանսական հարցեր

Ավիացիոն վճարներ և մուծումներ

12.1 Օդանավակայանում իրականացվող գործունեության բոլոր տեսակների, ինչպես նաև ցանկացած Գույքի օգտագործման դիմաց Կառավարիչն իրավունք կունենա գանձել Ավիացիոն վճարներ և մուծումներ, որոնք կսահմանվեն Կառավարչի կողմից:

Սույնով հաստատվում են Հավելված Բ-ով սահմանված Նախնական օդանավակայանային վճարները: Օդանավակայանային վճարների փոփոխությունները, այդ թվում՝ 12.9 կետի (ii) մասով նախատեսվածները, ուժի մեջ կմտնեն փոփոխության մասին ՀՀ Կառավարությանը Կառավարչի տեղեկացնելու օրվանից հետո, սակայն Կառավարությունն իրավասու է ծանուցումն ստանալու փաստացի օրվանից հետո 15-օրյա ժամկետում ներկայացնել առարկություններ: Եթե ՀՀ Կառավարությունը նշված ժամկետում առարկություն չի ներկայացնում, ապա կատարված փոփոխությունը մնում է ուժի մեջ:

ՀՀ Կառավարությունն անողջամտորեն չի մերժի Օդանավակայանային վճարների փոփոխությունների հաստատմանն իր համաձայնությունը:

Բոլոր վճարները, ոչ օդագնացային վճարները և վարձավճարները սահմանվելու են Կառավարչի բացառիկ հայեցողությամբ:

12.2 Կառավարիչն ամբողջ ընթացքում իրավունք կունենա Ավիացիոն վճարները և մուծումները ստանալ ԱՄՆ դոլարներով, եվրոյով կամ դրամով, կամ ԱՄՆ դոլարով կամ եվրոյով արտահայտված գումարների դրամական համարժեքով՝ զուտ Կառավարչի հայեցողությամբ՝ Հայաստանի օրենսդրությամբ թույլատրելի սահմաններում:

Ավիացիոն վճարները և մուծումներն արտարժույթի փոխակերպելու նպատակով Կառավարիչը պարտավոր է կիրառել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի փոխարժեքները: Եթե օրենսդրության կամ շուկայի պայմանների փոփոխության հետևանքով նշված փոխարժեքներն սկսում են էապես տարբերվել Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի փոխանակման իրատեսական՝ արժույթների արժեքի հաշվարկման իրական արժեքի վրա հիմնված գործարքների համար օգտագործվող պաշտոնական կամ ոչ պաշտոնական այլ դրույքաչափերից, ապա Կառավարիչն իրավասու կլինի ընտրել կիրառվելիք դրույքաչափերը (փոխարժեքը):

12.3 Կառավարիչը սահմանելու է Ավիացիոն վճարների և մուծումների հաշվեգրման և ստացման գրաֆիկը և այլ պայմանները, որոնք պարտադիր կլինեն բոլոր Օգտագործողների համար:

12.4 Ավիացիոն վճարները և մուծումները մեխանիկորեն շտկվելու են հետևյալ կարգով.

(i) դրամով արտահայտված Ավիացիոն վճարների և մուծումների դեպքում տվյալ վճարների և մուծումների գումարը փոփոխվելու է ըստ 12.2 կետի համաձայն որոշված դրամ-դոլար փոխարժեքի տատանումների:

(ii) ԱՄՆ դոլարով արտահայտված Ավիացիոն վճարների և մուծումների դեպքում. ԱՄՆ Աշխատանքի նախարարության Աշխատանքային վիճակագրության բյուրոյի կողմից ամիսը մեկ անգամ հրապարակվող «Ավարտուն ապրանքներ արտադրողի գների համաթիվը՝ սեզոնային շտկմամբ» (PPI կամ ԱԳՀ), որը վավերացվելու է Պայմանագրի ստորագրման տարվա դեկտեմբերի համաթվի («Բազային տարվա ԱԳՀ») և գների շտկման տարվա դեկտեմբերի համաթվի միջինով:

(iii) եվրոյով արտահայտված Ավիացիոն վճարների և մուծումների դեպքում տվյալ վճարների և մուծումների գումարը փոփոխվելու է ըստ 12.2 կետի համաձայն որոշված դրամ-դոլար փոխարժեքի տատանումների:

Հաշվի ներկայացման և փաստացի վճարման կատարման օրերի դրությամբ փոխարժեքի և սղաճային տատանումների համար Կառավարիչն իրավասու է ներկայացնել առանձին հաշիվ:

Մուծումներ

12.5 Կառավարիչն իրավասու է լոկ իր հայեցողությամբ գնահատել յուրաքանչյուր Մուծման չափը և փոփոխել այն: Մուծման չափը գնահատելիս Կառավարիչը զերծ կմնա որևէ պատճառով Օգտագործողների նկատմամբ խտրականությունից, բացառությամբ շուկայական և գործարար հարմարավետության չափորոշիչների:

Կառավարիչն իրավունք կունենա խիստ գաղտնի պահել յուրաքանչյուր Մուծման գումարը: Եթե Կառավարությանն ինչ-ինչ պատճառներով հայտնի է դառնում Մուծման չափը, ապա վերջինս պարտավոր է այդ տեղեկությունները խիստ գաղտնի պահել, բացառությամբ եթե դրանց հրապարակումը կոնկրետ պահանջվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:

12.6 Մուծումներ կատարելը Կառավարչի կողմից սահմանված պայմաններով էական նախապայման կլինի Օդանավակայանի ծառայություններ և Գույք օգտագործելու, ինչպես նաև Մուծում կատարելու դեպքում անձին թույլատրվող առևտրային գործունեություն իրականացնելու համար: Մուծում չկատարելը

Կառավարչին իրավասու է դարձնում դադարեցնել համապատասխան պայմանագրերը և պահանջել իրավասու մարմիններից, որպեսզի վերջիններս խնդրո առարկա անձին/կազմակերպությանը դուրս բերեն Օդանավակայանից, ինչպես նաև՝ պահանջել թույլատրելի ցանկացած այլ միջոցառում, ներկայացնել վարչական և դատական հայցեր՝ ստանալու հասանելիք և վճարման ենթակա բոլոր գումարների վճարում:

Ավիացիոն վճարներ

12.7 Ավիացիոն վճարների մասին Օգտագործողները տեղյակ են պահվելու այնպիսի համապատասխան միջոցներով, ինչպիսիք են, օրինակ, փակցված նշանները, գրքույկները և այլն, որոնք Կառավարիչը կարող է ընդունելի համարել:

12.8 Ավիացիոն Վճարների՝ Կառավարչի կողմից սահմանված պայմաններին համապատասխան վճարումը կլինի էական պայման՝ թռիչքը սկսելուն հավանություն ստանալու, Օդանավակայանի ծառայություններից կամ Գույքի որևէ առարկայից օգտվելու համար կամ իրականացնելու ցանկացած գործունեություն, որի իրավունքը ցանկացած անձ ստանում է Ավիացիոն Վճարների վճարմամբ: Ավիացիոն Վճարների վճարումը չիրականացնելը Կառավարչին իրավունք է տալիս պահանջել ՀՀ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունից կամ ցանկացած այլ իրավասու պետական մարմիններից կասեցնել օդանավը կամ արգելել ցանկացած թռիչք, և նման պետական մարմինը չվճարման ապացույցների ներկայացման պարագայում կձեռնարկի՝ համապատասխան տոկոսների, տուժանքների, իրավունքից զրկելու, Օդանավակայանում գործելու ցանկացած թույլտվությունների վերացման կամ կասեցման և/կամ այդտեղից վտարման համար, ինչպես նաև՝ ցանկացած այլ կիրառելի միջոցների կիրառում, որոնք չեն հակադրվում հասանելիք և վճարման ենթակա ցանկացած գումարների վճարման կատարման վերաբերյալ վարչական և դատական համապատասխան պահանջների ներկայացման Կառավարչի իրավունքին: ՀՀ Կառավարությունը պեքտ է ապահովի, որպեսզի Կառավարչի դիմումի հիման վրա ՀՀ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը կամ իրավասու այլ պետական մարմիններն իրականացնեն վերը նշված միջոցառումները ՀՀ օրենքների համաձայն:

Ներքին շահութաբերության ուղղումը

12.9 Տարեկան [քսան] տոկոս ([20]%) ներքին շահութաբերության հասնելու համար կիրառվելու է հետևյալ ընթացակարգը.

(i) Ներքին շահութաբերության նշված մակարդակը պահպանելու համար յուրաքանչյուր հարկային տարվա ավարտին Կառավարիչը կարող է առաջարկել Մաստեր-պլանի ուղղումներ: ՀՀ Կառավարությունը չի կարող անողջամտորեն մերժել իր համաձայնությունը նշված ուղղումներին:

(ii) Եթե Մաստեր-պլանի հաստատված ուղղումները չեն վերականգնում շահութաբերության համաձայնեցված դրույքաչափը, ապա Կառավարիչն իրավասու կլինի ուղղել Օդանավակայանի Վճարների իրական արժեքը (սղաճի հաշվառմամբ)՝ յուրաքանչյուր ուղղումից առաջ նախապես տեղեկացնելով ՀՀ կառավարությանը առաջարկվող ուղղման մասին:

(iii) Եթե (i) և (ii) կետերում սահմանված ընթացակարգերի կիրառման արդյունքում Կառավարիչը չի վերականգնում շահութաբերության համաձայնեցված դրույքաչափը, Կառավարիչն իրավասու կլինի ինքնուրույն երկարաձգելու պայմանագրի ժամկետը այնքան ժամանակով, որքանը թույլ կտա նրան ստանալու հատուցում շահութաբերության համաձայնեցված դրույքաչափի համապատասխան:

Ուղղումներ Հարկերի փոփոխությունների կապակցությամբ

12.10 Եթե ընթացիկ կիրառվելիք հարկերը Տիրապետման օրվանից հետո ավելանում են, ապա նման ավելացմանը հակազդելու համար Կռավարիչն իրավասու կլինի անմիջապես ավելացնել Ավիացիոն Վճարները և Տուրքերը՝ առանց 12.9. կետով սահմանված իր իրավունքներին վնասելու:

Սույն կետի առումով «Հարկի ավելացում» նշանակում է դրույքաչափի ավելացումներ, ցանկացած արտոնության վերացում կամ փոքրացում, նվազեցում և ցանկացած այլ փոփոխություն, որի արդյունքում վերջին հաշվով ավելանում է հարկային ազդեցությունը:

12.11 Վերը սահմանված ուղղումները չեն զրկի Կառավարչին ՀՀ օրենսդրության համաձայն դրա համար ցանկացած այլ հնարավոր փոխհատուցողական միջոցներ փնտրելու իրավունքից:

XIII. Կանոններ Գույքի մասին

13.1. ՀՀ կառավարությունը Կառավարչին կփոխանցի Օդանավակայանը և Գույքը օգտագործելու իրավունքը, այդ թվում՝ ենթակոնցեսիաների և վարձակալության տալու իրավունքը և օգտագործման այլ իրավունքներ,, ընդ որում՝ Կառավարիչը պատշաճ հոգատարություն կցուցաբերի դրա պահպանության և շահագործման նկատմամբ:

13.2. Կառավարիչն իրավասու է օգտագործել և կառավարել Օդանավակայանը և այդ Օդանավակայանին այժմ կամ ապագայում վերագրվող Գույքը: Այդ առումով ՀՀ Կառավարությունը պարտավոր է կադաստրում գրանցել Կառավարչի իրավունքը՝ օգտագործելու Օդանավակայանը և Գույքը, և լիովին գործադրել այդ իրավունքը Տիրապետման օրվանից: 8.1 բաժնի (xi) կետի համաձայն

Կառավարիչն իրավունք ունի իրականացնել այդ գույքի կառավարումը, տնօրինումը, ցանկացած եղանակով ծանրաբեռնումը, գրավի, գրավականի առարկա դարձնելը, գրավի ցանկացած իրավունքով ծանրաբեռնումը, փոխանցումը և ընդհանրապես՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած այլ կերպ օգտագործումը Ժամկետի ընթացքում: Նշված իրավունքները հաստատելու, օգտագործելու, կիրարկելու և երրորդ անձանց նկատմամբ գործադրելու նպատակով ՀՀ Կառավարությունը Կառավարչին տրամադրելու է լիազորագրեր, հավատարմագրեր և ցանկացած այլ գլխավոր և երկրորդային փաստաթուղթ, ինչպես նաև՝ կատարելու է ցանկացած գործողություն, որը Կառավարիչը կարող է ողջամտորեն անհրաժեշտ համարել տվյալ նպատակների համար:

13.3. Ժամկետի ընթացքում կառուցված բոլոր շինությունները հանդիսանում են Կառավարչի սեփականությունը. Կառավարիչն իրավասու է դրանք գրանցել որպես իր սեփականություն: Կառավարիչը Ժամկետի ընթացքում ձեռք բերված ողջ շարժական գույքի սեփականատերն է: Կառավարիչը պարտավոր է Օդանավակայանային գործունեությանն առնչվող նշված շինությունների և շարժական գույքի Սեփականությունը Պայմանագրի դադարեցման դեպքում փոխանցել ՀՀ Կառավարությանը:

13.4. Պայմանագրի դադարեցումից հետո Կառավարիչը պարտավոր է Գույքը վերադարձնել այնպես, որպեսզի Կառավարությունը կարողանա շարունակել ծառայությունների իրականացումն ըստ էության այնպիսի պայմաններով, ինչպիսիք ապահովվում էին Պայմանագրի գործողության վերջին հինգ տարիներին: Փոխանցման դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հարկերի պատասխանատուն պետք է լինի ՀՀ Կառավարությունը:

13.5. Կառավարիչը պատասխանատվություն չի կրի շրջակա միջավայրի առումով ցանկացած Վնասակար հետևանքի համար, որը պատճառվել կամ ծագել է նախքան Տիրապետման օրը, կամ Գույքի վերանորոգման այն աշխատանքների համար, որոնք պահանջվում են Տիրապետմանը նախորդած գործունեության պատճառով: Տիրապետման օրվանից հետո տասնութ (18) ամիսը լրանալու օրվանից սկսած Կառավարիչը պատասխանատվություն կկրի շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության բոլոր պահանջների մասով (բացառությամբ Տիրապետումից առաջ կատարված գործունեության արդյունքում Գույքին վերանորոգման պատասխանատվությունից), այդ թվում՝ շրջակա միջավայրի այն աղտոտումների համար, որոնք արդյունքն են Կառավարչի գործունեության:

<u>13.6.</u> Կառավարչի սեփականությանն է անցնում ողջ այն գույքը, բացառությամբ անշարժ գույքի, որը փոխարինվում է Կառավարչի կողմից մաշվածության պատճառով կամ Օդանավակայանային գործունեության ազդեցությունը կրող գույքի որակը բարելավելու նպատակով:

13.7. Կառավարիչն իրավասու է քանդել, վերաշինել կամ փոփոխել Օդանավակայանի ցանկացած մաս՝ բարելավելու այն համաձայն Մաստեր-պլանի:

XIV. Աշխատողները

Կառավարիչն ազատ կլինի աշխատանքի ընդունելու այնքան աշխատողներ, որքան կպահանջվի Օդանավակայանի արդյունավետ շահագործման համար, և պարտավորված չի լինի աշխատանքի ընդունելու կամ պահելու ներկայումս Ընկերություններից կամ Օդանավակայանում գործունեություն իրականացնող կամ իրավասություններ ունեցող ցանկացած այլ պետական կամ մասնավոր կազմակերպություններից որևէ մեկում աշխատող աշխատողների: Կառավարիչն ամեն ջանք կգործադրի՝ աջակցելու ՀՀ կառավարությանը, որպեսզի գտնվեն համապատասխան միջոցներ՝ նվազեցնելու սույն Պայմանագրի ազդեցությունը Օդանավակայանի կամ Ընկերությունների ներկայիս աշխատողների վրա:

XV. Տիրապետում

15.1 Տիրապետումը տեղի կունենա Ուժի մեջ մտնելու օրվանից հաշված ամենաուշը 120-րդ օրացուցային օրը:

15.2 Եթե Տիրապետման օրվա դրությամբ ՀՀ Կառավարությունը չի կատարել հետևյալ պայմաններից որևէ մեկը, ապա Կառավարիչն իրավունք ունի Պայմանագիրը դադարեցնել և միևնույն ժամանակ կիրառել հատուցողման ստացման ուղղված այլ քայլեր համապատասխան օրենսդրության շրջանակներում.

(i) Գույքը պետք է ազատված լինի բոլոր զբաղեցնողներից, օգտագործողներից և Գույքի որևէ մասի նկատմամբ փաստացի կամ իրավաբանական իրավասություններ ունեցող բոլոր այլ անձանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ ստացվել է Կառավարչի համաձայնությունը,

(ii) Սույն Պայմանագրով նախատեսված Կառավարչի իրավունքը՝ պատշաճ կերպով օգտագործելու Գույքը, պետք է սահմանված կարգով գրանցված և ուժի մեջ մտած լինի,

(iii) Օդանավակայանում Ընկերությունների գործունեությունը պետք է որոշակիորեն դադարի, բացառությամբ Կառավարչի կողմից թույլատրված դեպքերի,

(iv) Կառավարության պատասխանատվությամբ Օդանավակայանից պետք է հեռացվեն բոլոր այն աշխատողները, որոնք Կառավարչի կողմից աշխատանքի չեն վերցվելու,

(v) 16.1 կետի երկրորդ մասի համաձայն Կառավարչի կողմից պահանջվող հողակտորների հատկացումը՝ այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չեն պահանջվում անօգտագործելի ճանաչման վարույթներ,

(vi) 5.4 կետում նշված լիցենզիաների տրամադրումը,

(vii) այն փաստաթղթերի տրամադրումը, որոնք Կառավարչին հնարավորություն կտան ստանալ նախնական ֆինանսավորում՝ համաձայն 8.1 բաժնի (x) և (xi) ենթակետերի և 13.2 բաժնի,

(viii) Կողմերի համաձայնությունը՝ կատարելու լրացուցիչ քայլեր և ապահովել պահանջների կատարում համաձայն 15.3 Բաժնի,

(ix) Հավելված Ե-ում նշվող կամ Հավելված Ե-ի համաձայն սահմանվելիք բոլոր քայլերի կատարում:

15.3 Տիրապետումից երեսուն (30) օր առաջ Կողմերը պետք է հանդիպեն՝ պարզելու, թե լրացուցիչ ինչ քայլեր պետք է կատարվեն և ինչ պահանջներ պետք է ապահովվեն, որպեսզի արդյունավետորեն և ամբողջությամբ փոխանցվի Գույքը և արդյունավետորեն և լիովին իրականացվեն Կառավարչի իրավունքները Տիրապետման օրվանից սկսած, ինչպես նաև՝ խուսափեն Օդանավակայանի կարևորագույն ծառայությունների ընդհատումից:

XVI. Լրացուցիչ հող

16.1. ՀՀ կառավարությունը ողջամիտ ժամկետում Օդանավակայանը շրջապատող հողամասերը մատչելի կդարձնի Կառավարչի համար, կախված նրանից, թե Կառավարիչն ինչն անհրաժեշտ կհամարի Օդանավակայանի ենթակառույցի պահպանման և/կամ բարելավման համար: Այդ նպատակի համար ՀՀ կառավարությունը կիրականացնի այն բոլոր վարչական և/կամ դատական գործողությունները, որոնք կարող են անհրաժեշտ դառնալ իր բացառիկ պատասխանատվության համաձայն:

Տիրապետման օրը՝ ի լրումն D Հավելվածում նկարագրված հողամասերի՝ ՀՀ կառավարությունը Կառավարչին կտրամադրի շրջապատող հողամասերը, որոնք Կառավարչի խնդրանքի համաձայն կարող են ազդել Օդանավակայանի գործառնությունների վրա:

ՀՀ Կառավարությունն անհիմն չի մերժի D Հավելվածում նկարագրվածներից բացի լրացուցիչ հողամասերի հատկացման թույլտվություն տալը:

16.2. 16.1. կետում նշված հողամասերը կտրամադրվեն ցանկացած ծանրաբեռնվածությունից կամ արգելքից ազատ՝ այնպես, որպեսզի Կառավարիչը

կարողանա դրանք օգտագործել անմիջապես՝ այն եղանակով, որը նա հարմար կգտնի:

16.3. 16.1. և 16.2. կետերում սահմանված պարտավորությունների հետ կապված բոլոր ծախսերը կրում է բացառապես ՀՀ Կառավարությունը՝ առանց որևիցե բացառությունների:

XVII. Անվտանգություն

17.1. Օդանավակայանի տարածքում ոստիկանության և անվտանգության ընդհանուր ընթացակարգերը կլինեն ՀՀ կառավարության պարտականությունը՝ գործող օրենսդրությանը և Օդանավակայանների հետևյալ միջազգային չափորոշիչներին համապատասխան. ICAO-Հավելված 17 «Անվտանգություն» և ICAO-ի հարակից ձեռնարկներ: Քրեական ոստիկանությունը և ոչ զինվորական այլ անվտանգության ուժերը պարտավոր կլինեն ոստիկանական գործունեություն իրականացնել Օդանավակայանի տարածքում՝ այնտեղ մուտք գործելու լիակատար իրավասությամբ:

ՀՀ Կառավարությունը պարտավոր է բարձրացնել անվտանգության չափանիշները և ավելի շատ ռեսուրսներ հատկացնել այդ նպատակին՝ արդյունավետորեն ապահովելու Օդանավակայանի տարածքի անվտանգությունը Կառավարչի կողմից Մաստեր-Պլանն իրականացնելու ընթացքում:

17.2. Առանց վերոգրյալին հակադրվելու՝ Կառավարիչն իրավունք կունենա գործող օրենսդրությանը համաձայն վարձել, պահել և ղեկավարել անվտանգության մասնավոր ծառայություն՝ Օդանավակայանի տարածքներում և դրանց համար:

XVIII. Պայմանագրի դադարում

18.1. Դադարման դեպքերն են.

ա) Ժամկետը լրանալու հետևանքով,
բ) Կառավարչի մեղքի հետևանքով,
գ) Կառավարչի սնանկացման հետևանքով,
դ) Վարչական հայեցողական ակտի ուժով,
ե) ՀՀ կառավարության մեղքի հետևանքով,
զ) Ֆորս-մաժոր իրադարձությունների հետևանքով՝ IX բաժնի համաձայն:

18.2. Պայմանագրի դադարումը կնշանակի այն պայմանագրերի դադարում, որոնք Կառավարիչը որևիցե նպատակով կարող է կնքած լինել երրորդ անձանց հետ, և դրանց մեխանիկական փոխանցումը ՀՀ Կառավարությանը՝ բացառությամբ եթե տվյալ պայմանագրերով նախատեսված է այլ կերպ:

ՀՀ կառավարությունը կերաշխավորի և անվնաս կպահի Կառավարչին նշված պայմանագրերից ծագած ցանկացած Վնասակար հետևանքից, որից վերջինը կարող է տուժել՝ պայմանով, որ Կառավարչի դեմ երրորդ անձանց հայցերը քննվեն դատարանի, պետական մարմնի կամ արբիտրաժային դատարանի կողմից կամ Հայաստանի Հանրապետությունում, կամ որևէ այլ երկրում՝ անկախ արդեն իսկ ներկայացված և վարույթի մեջ գտնվող հայցերից և բողոքներից, և չանդրադառնալով XXI բաժնով Կառավարությանը վերապահված իրավունքների վրա, կամ՝ Կառավարության պատասխանատվությունը որոշվում է XXI բաժնով նախատեսված արբիտրաժային վարույթի միջոցով:

Կառավարիչը պարտավոր է երրորդ անձանց հետ չկնքել Օդանավակայանին առնչվող պայմանագրեր, որոնց ժամկետն ավելի քան հինգ տարով գերազանցում է 6.1 բաժնում նշված ժամկետի կամ դրա երկարաձգման ավարտի պահը:

18.3. **Ժամկետը լրանալը:**

Սույն Պայմանագիրը դադարում է Ժամկետը լրանալիս:

18.4. **Դադարում Կառավարչի մեղքի հետևանքով:**

ՀՀ Կառավարությունն իրավասու կլինի դադարեցնել Պայմանագիրը Կառավարչի մեղքի հետևանքով, եթե.

ա) Պայմանագիրը լրիվ կամ մասամբ փոխանցված է Կառավարչի կողմից՝ առանց ՀՀ կառավարության հատուկ թույլտվության: Որևէ ենթակոնցեսիա, ենթապայմանագիր՝ այն դեպքերում, երբ Կառավարության համաձայնությունը չի պահանջվում, կամ Օդանավակայանի գործունեության՝ սույն Պայմանագրի համաձայն իրականացման ցանկացած այլ ձև չի կարող ճանաչվել սույն Պայմանագրի փոխանցում,

բ) Կառավարիչը չի ընդունում Տիրապետումը՝ չունենալով սույն Պայմանագրի դրույթներին համապատասխանող հիմնավոր պատճառ, կամ

գ) Կառավարիչը հրաժարվում է Օդանավակայանի միջոցները շահագործելուց: Հրաժարում է համարվում, երբ Կառավարիչն իր մեղքի հետևանքով և առանց հիմնավոր պատճառի ավելի քան 10 (տաս) օրով դադարեցնում է Օդանավակայանի շահագործումը:

18.5. **Կառավարչի սնանկություն:**

Կառավարչի սնանկությունը, անվճարունակությունը, նրան պարտատուներից պաշտպանող իրավական ակտի ուժը կորցրած ճանաչումը կամ Կառավարչի բիզնեսի դադարումը հանգեցնում է Պայմանագրի դադարմանը:

18.6. **Դադարում՝ վարչական հայեցողական որոշման հետևանքով:**

ՀՀ Կառավարությունը զերծ կմնա սույն Պայմանագիրը սույն կետով նախատեսված կարգով դադարեցնելուց՝ քանի դեռ չի լրացել Ժամկետի առաջին տասնհինգ (15) տարին:

Եթե ՀՀ կառավարությունն իր հայեցողական լիազորությունների հիման վրա որոշի միակողմանիորեն դադարեցված համարել Պայմանագիրը՝ սույն Պայմանագրով նախատեսված դադարեցման հիմքերից զատ որևէ այլ պատճառով, ապա ՀՀ Կառավարությունը պետք է Կառավարչին վճարի Վնասի վերացման գումարները, երաշխավորի և անվնաս պահի Կառավարչին սույն Պայմանագրի դադարման պատճառով երրորդ անձանց կողմից առաջացված ցանկացած Վնասակար հետևանքից:

Եթե ՀՀ Կառավարությունը դադարեցնում է Պայմանագիրը ազգային պաշտպանության ողջամիտ խնդիրների պատճառով, ապա Բացասական հետևանքները բացառապես կազմված կլինեն ՀՀ Կառավարության կողմից Պայմանագրի դադարեցման պահի դրությամբ Կառավարչի կողմից փաստացի կատարված ներդրումներից, գումարած Կառավարչի ունեցած ներդրումային պարտավորությունները, որոնք չեն կարող չեղյալ հայտարարվել կամ փոխանցվել ՀՀ Կառավարությանը կամ նոր կառավարչի:

18.7. Պայմանագրի խախտումը ՀՀ կառավարության կողմից:

Եթե ՀՀ Կառավարությունը խախտի սույն Պայմանագրի համաձայն իր պարտավորություններից որևէ մեկը, ապա Կառավարիչն իրավունք կունենա դադարեցնել Պայմանագիրը, եթե Կառավարությունը խախտման մասին Կառավարչից ծանուցում ստանալուց հետո 20-օրյա ժամկետում չի վերացնում խախտումը: Նման դեպքում ՀՀ Կառավարությունը Կառավարչին վճարում է Վնասի վերացման գումարը, ինչպես նաև՝ երաշխավորում և անվնաս պահում Կառավարչին սույն Պայմանագրի դադարման պատճառով երրորդ անձանց կողմից առաջացված ցանկացած Վնասակար հետևանքից:

18.8. Ֆորս-մաժորային իրադարձությունների պատճառով դադարեցման հատուկ դեպքեր:

Կառավարիչն իրավասու է համարել, որ տեղի է ունեցել Ֆորս-մաժորային իրադարձություն և այդ հիմքով, նախապես վեց ամիս առաջ ծանուցելով, դադարեցնել Պայմանագիրը, եթե ողջամտորեն ապացուցում է, որ վերջին երկու (2) տարվա ընթացքում Կառավարչի կողմից փաստացի կատարված ներդրումների ներքին շահութաբերությունը չի ստացվել: Կառավարիչը պետք է օգնի ՀՀ Կառավարությանը՝ գտնելու քայլեր, որոնք կապահովեն Օդանավակայանի գործունեության բնականոն շարունակումը, ինչպես նաև՝ պետք է կազմակերպի դասընթացներ, տրամադրի տեղեկություններ և հմտություններ ՀՀ Կառավարությանը՝ վերջինիս ողջամիտ պահանջի հիման վրա:

XIX. Փոխանցում

Բացի III Հոդվածում «Կառավարչի» հասկացության սահմանմամբ նախատեսված դեպքից և Պայմանագիրը Կառավարչի կողմից միակողմանիորեն կամ համատեղ վերահսկվող, կամ՝ Կառավարչին վերահսկող երրորդ անձի փոխանցելուց, Կառավարիչն իրավունք չունի փոխանցելու սույն Պայմանագիրն առանց ՀՀ կառավարության նախնական գրավոր համաձայնության, որն անհիմն կերպով չի մերժվի: Սույն պարբերության առումով «վերահսկողություն» բառն ունի այն իմաստը, որը մատնանշված է 7.2 կետի (vii) ենթակետում:

XX. Այլ պայմաններ

20.1. Առանց օրենքով նախատեսված որևէ պարտականության սահմանափակման՝ ինչպես սույնի ամսաթվին, այնպես էլ՝ նախքան այն և դրանից հետո Կողմերը կանեն՝ սույն Պայմանագրի պայմանների իրագործման նպատակին հասնելու համար անհրաժեշտ ամեն քայլ և գործողություն, կկնքեն բոլոր փաստաթղթերը և կկատարեն բոլոր գործերը:

20.2. Կառավարիչը գնահատելու է Օդանավակայանի բեռնահամալիրի շինարարության կապակցությամբ «Զվարթնոց միջազգային օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության կողմից ստանձնված պարտավորություններն իր վրա վերցնելու հնարավորությունը: Կառավարիչը պարտավորվում է իր վրա վերցնել նշված վարկային պարտավորությունն ամբողջությամբ կամ մասամբ՝ պայմանով, որ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը ողջամտորեն վերաձևակերպի վճարման ժամկետները, վերաֆինանսավորի, կամ այլ կերպ նպաստի վճարմանը, իսկ Կառավարությունն աջակցի Կառավարչին նշված բանկի հետ բանակցություններում: Եթե վերը նշված վերաձևակերպումը կամ վերաֆինանսավորումն անընդունելի է, կամ եթե ՀՀ Կառավարությունը չի ցուցաբերում Կառավարչի կողմից պահանջվող աջակցությունը, կամ եթե ՀՀ Կառավարությունը չի ընդունում վարկի մարման նպատակով Կառավարչի կողմից առաջարկվող գումարաչափը, ապա Կողմերն իրավասու են դադարեցնել սույն Պայմանագիրը՝ առանց Կողմերից որևէ մեկի համար ծախսերի առաջացման:

20.3. Օդանավակայանային գործունեության՝ թե՛ Կառավարչի, թե՛ իր ենթապայմանագրերի իրավասու կողմերի իրականացրած բոլոր տեսակների կատարման համար Կառավարիչը կունենա և կարող է օգտվել բոլոր լիցենզիաներից, ազատումներից, անձեռնմխելիություններից և այլ արտոնություններից, որոնք ունեին և որոնցից օգտվում էին Ընկերությունները՝ առկայության դեպքում:

20.4. Կառավարիչն իրավունք կունենա Ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ուժը կորցրած ճանաչել Օդանավակայանին կամ Օդանավակայանային գործունեությանն առնչվող բոլոր երրորդ անձանց իրավունքները և պարտականությունները, որոնք առաջացել են կամ սկզբնապես ծագել են նախքան Ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ կառավարությունը պարտավոր է համապատասխան երրորդ անձանցից ստանալ բավարար հրաժարումներ, վճարել համապատասխան փոխհատուցումներ, որոնք այդ երրորդ անձինք կարող են պահանջել, երաշխավորել և անվնաս պահել Կառավարչին դրա հետ կապված ցանկացած Վնասակար Հետևանքից՝ պայմանով, որ որ Կառավարչի դեմ երրորդ անձանց հայցերը քննվեն դատարանի, պետական մարմնի կամ արբիտրաժային դատարանի կողմից կամ Հայաստանի Հանրապետությունում, կամ որևէ այլ երկրում՝ անկախ արդեն իսկ ներկայացված և վարույթի մեջ գտնվող հայցերից և բողոքներից, և չանդրադառնալով XXI բաժնով Կառավարությանը վերապահված իրավունքների վրա, կամ՝ Կառավարության պատասխանատվությունը որոշվում է XXI բաժնով նախատեսված արբիտրաժային վարույթի միջոցով: Կառավարիչը կարող է պահանջել ՀՀ կառավարությունից ձեռնարկել հատուկ գործողություններ այն հաշվով, որպեսզի Կառավարիչը կարողանա լիարժեք իրականացնել Օդանավակայանային գործունեությունը, սակայն Կառավարչի կողմից նման պահանջով չդիմելը չի նշանակի, որ ՀՀ Կառավարությունն ազատվում է այդ պարտավորություններից:

20.5. Սույն Պայմանագրին, այդ թվում՝ Մաստեր-պլանին վերաբերող բոլոր հայտարարությունները, ընթացակարգերը և ծանուցումները պետք է ուղղորդվեն ՀՀ վարչապետի մի ջոցով: ՀՀ Կառավարությունն պարտավոր է ապահովել նշված հայտարարությունների, ընթացակարգերի և ծանուցումների արդյունավետ ընթացքը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գերատեսչությունների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ թույլատրվածի սահմաններում:

20.6. Կողմերը պարտավոր են միմյանց հետ խորհրդակցել՝ Անհրաժեշտ ենթակառուցվածքի, վթարներին հակազդելու, սեփականության սահմանափակումների, բարձրությունների, օդանավագնացության խոչընդոտների, շրջակա միջավայրի վրա ներգործության կարգավորման և կարիքների վերաբերյալ:

20.7. ՀՀ Կառավարությունը պարտավոր է հետևել «Արգենտինայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ներդրումների փոխադարձ հովանավորության և խթանման մասին» 1993թ. ապրիլի 16-ին կնքված համաձայնագրի 5-րդ կետին և «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին:

20.8. Ժամկետի ընթացքում Կառավարիչն օգտվում է շահույթի, եկամուտների և նմանատիպ այլ հարկերի կապակցությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից և հարկազատումներից:

20.9. Կառավարիչը պարտավոր է նպաստել ՀՀ օրենսդրության, իրավական ակտերի և գերատեսչական որոշումների, ՀՀ Կառավարության միջազգային պայմանագրերի և միջազգային սովորույթների համաձայն ՀՀ Նախագահի,

օտարերկրյա բարձրագույն պաշտոնատար անձանց և նրանց օդանավերի նկատմամբ արարողակարգի պահանջների կատարմանը:

Բացի արարողակարգի պահանջներից, Նախագահի օդանավը պետք է սպասարկվի անվճար՝ բացառությամբ վառելիքով լիցքավորման խնդիրների:

20.10. Սույն Պայմանագրով նախատեսված կամ դրա առնչությամբ Կառավարչի կողմից տրվող բոլոր ծանուցումները պետք է լինեն անգլերեն, բայց կարող են գրվել նաև հայերեն: ՀՀ Կառավարության կողմից տրվող ծանուցումները պետք է լինեն անգլերեն և հայերեն: Տարբերակների միջև հակասությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

20.11. Նոտարական հաստատման նպատակով Կողմերն իրականացնում են սույն Պայմանագրի թարգմանություն հայերեն: Սույն փաստաթղթի և դրա հայերեն թարգմանության միջև տարբերությունների դեպքում գերակայում է սույն փաստաթուղթը:

20.12. ՀՀ Կառավարության կողմից վճարման ենթակա ցանկացած գումար, այդ թվում՝ Վնասի վերացման գումարները և Բացասական հետևանքների դիմաց հատուցման գումարները, պետք է. (i) հաշվարկվեն և վճարվեն ազատ փոխարկելի ԱՄՆ դոլարներով կամ եվրոներով, և (ii) վճարելի լինեն ամերիկյան կամ եվրոպական այնպիսի բանկային հաշվի, որը կարող է մատնացույց անել Կառավարիչը՝ զուտ իր հայեցողությամբ:

XXI. Կարգավորող օրենք և ընդդատություն

21.1. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասի և «Արգենտինայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ներդրումների փոխադարձ հովանավորության և խթանման մասին» համաձայնագրի 9-րդ կետի համաձայն, սույն Պայմանագրի վավերականության, մեկնաբանման և/կամ կիրարկման վերաբերյալ ցանկացած վեճ Կառավարչի հայեցողությամբ կարող է հանձնվել Վեճերի լուծման միջազգային կենտրոնի արբիտրաժին՝ հաշտեցման, արբիտրաժի կամ քննության ընթացակարգերի համար այդ մարմնի լրացուցիչ կառուցակարգին համապատասխան: Նշված արբիտրաժի վճիռը կլինի վերջնական:

21.2. Ներդրումների վերաբերյալ վեճերի լուծման միջազգային կենտրոնին հանձնված բոլոր վեճերը պետք է լուծվեն «Արգենտինայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ներդրումների փոխադարձ հովանավորության և խթանման մասին» համաձայնագրի 9-րդ կետի 4-րդ մասի դրույթների հիման վրա:

21.3. Եթե Կառավարիչը որոշի չհանձնել վեճը 21.1. կետում սահմանված արբիտրաժի, ապա գործն ընդդատյա կլինի ՀՀ սովորական դատարաններին, որոնք կկիրառեն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքները:

Ի հաստատումն վերոգրյալի՝ Կողմերը Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում 2001թ. դեկտեմբերի 17-ին չորս օրինակից կնքեցին սույն պայմանագիրը, որը պատշաճ կերպով վավերացվեց նոտարի կողմից:

«Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.»

Հայաստանի Հանրապետության կառավարություն

Ի դեմս Տնօրենների խորհրդի
Նախագահ Էդվարդ Էրնեկյանի

Ի դեմս Վարչապետ
Անդրանիկ Մարգարյանի

«17» դեկտեմբերի 2001

Կողմերը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, նրանց անձնագրի ընդունակությունը ստուգվեցին:

Գրանցված է անդրանիկագրանում՝ № 563

Գանձված է պետական տուրք — 1-2968

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողմերից յուրաքանչյուրը հավաստիացնում և երաշխավորում է մյուսին, որ սույն Հավելվածում արվող հայտարարությունները ճշմարիտ են և լիարժեք սույն Պայմանագրի օրվա դրությամբ, և որ ճշմարիտ և լիարժեք կլինեն ողջ Ժամկետի ընթացքում՝ բացառությամբ, եթե համատեքստը որոշ ժամանակի ընթացքում սահմանափակում է դրանց իսկությունը:

I. Կառավարչի հավաստիացումները և երաշխավորությունները

1. **Իրավասություն և լիազորվածություն:** Սույն Պայմանագրի և սույն Պայմանագրով նախատեսված գործարքների կապակցությամբ կամ դրանց առումով առաքվող ցանկացած այլ պայմանագրի, հավաստագրի կամ ակտի (հավաքաբար՝ «Փաստաթղթեր») առնչությամբ, որոնց կողմ որպես հանդես է գալիս կամ կգա Կառավարիչը, վերջինս. (i) իրավասու է և լիազորված՝ ստորագրելու և կնքելու դրանք, (ii) լիովին իրավասու է և լիազորված՝ կատարելու դրանցով նախատեսված իր պարտավորությունները և իրականացնելու գործարքները, (iii) պատշաճ կարգով կնքել և ստորագրել է դրանք, և (iv) ստանձնել է պարտադիր, իրավաբնույթի պարտավորեցնող պարտականություններ, որոնք համապատասխան պայմաններով կիրարկելի են իր նկատմամբ:

2. **Համաձայնության պահանջի բացառում:** Փաստաթղթերի կամ դրանցով և սույնով նախատեսված գործարքների կնքման, ստորագրման, կամ կատարման առումով չի պահանջվում ձեռք բերել կամ ապահովել բացի ՀՀ Կառավարությունից որևէ այլ անձի, մարմնի կամ պետական գործակալության համաձայնություն, հաստատում, հրահանգ կամ թույլտվություն, հայտարարագրում, ներկայացում կամ գրանցում:

3. **Խախտումների բացառում:** Փաստաթղթերի կնքումը, ստորագրումը և կատարումը, դրանցով նախատեսված գործարքների կնքումը և Օդանավակայանի գործունեության իրականացումը տվյալ պահին կամ ապագայում.

(ա) հակասության մեջ չէ որևէ գրավի, պարտամուրհակի, պարտատոմսի, համաձայնության, պայմանագրի, համաձայնագրի, վարձակալության, արտոնագրի կամ որևէ այլ տեսակի կամ բնույթի փաստաթղթի կամ պարտավորության կատարման հետ, չի հանգեցնում դրանց խախտման, փոփոխման, դադարեցման կամ շեղման, կամ դրանցով նախատեսված հնարավորությունների կորստյան, չի արագացնում դրանցով պահանջվող աշխատանքները, չի առաջացնում դրանց պայմանների փոփոխման իրավունք, և չի ստեղծում այդպիսիք, չի առաջացնում որևէ ակտիվի կամ գույքի ծանրաբեռնվածություն, և որևիցե ձևով կողմերից ոչ մեկին չի ազատում վերը նշված այն փաստաթղթերի կամ պարտավորությունների և պայմանների կատարումից,

որոնք կարող են ազդել ՀՀ Կառավարության կամ վերջինիս պատկանող գույքի կամ ակտիվների վրա՝ համաձայն Արգենտինայի օրենսդրության:

(բ) հակասության մեջ չէ որևէ օգուտի/շահի հետ, չի խախտում կամ առաջացնում որևէ լիցենզիայի, ֆրենչայզի, հրահանգի, վճռի, կարգադրության, արգելանքի նախատեսած հնարավորությունների կորուստ՝ համաձայն Արգենտինայի օրենսդրության, կամ

(գ) հակասության մեջ չէ և չի խախտում Արգենտինայի Հանրապետության օրենքների որևէ դրույթ:

<u>II. Կառավարության կողմից տրվող հավաստիացումներ և երաշխիքներ</u>

1. **<u>Իրավասություն և լիազորվածություն:</u>** Սույն պայմանագրի և սույն Պայմանագրով նախատեսված գործարքների կապակցությամբ կամ դրանց առումով առաքվող ցանկացած այլ պայմանագրի, հավաստագրի կամ ակտի (հավաքաբար՝ «Փաստաթղթեր») առնչությամբ, որոնց կողմ որպես հանդես է գալիս կամ կգա Կառավարիչը, վերջինս. (i) իրավասու է և լիազորված՝ ստորագրելու և կնքելու դրանք, (ii) լիովին իրավասու է և լիազորված՝ կատարելու դրանցով նախատեսված իր պարտավորությունները և իրականացնելու գործարքները, (iii) պատշաճ կարգով կնքել և ստորագրել է դրանք, (iv) ստանձնել է պարտադիր, իրավաբնույթի պարտավորեցնող պարտականություններ, որոնք համապատասխան պայմաններով կիրարկելի են իր նկատմամբ, (v) միակ մարմինն է, որն իրավասու է Կառավարչին տալ սույնով նախատեսված իրավունքները կամ ցանկացած այլ իրավունք, որ վերաբերում է սույն Օդանավակայանից բացի այլ օդանավակայանի, և (vi) հետևել է համապատասխան բոլոր ընթացակարգերին և կատարել է կիրարկելի իրավական ակտերով պահանջվող բոլոր ֆորմալությունները:

2. **<u>Համաձայնության պահանջի բացառում:</u>** Փաստաթղթերի կամ դրանցով և սույնով նախատեսված գործարքների կնքման, ստորագրման, կամ կատարման առումով չի պահանջվում ձեռք բերել կամ ապահովել որևէ անձի, մարմնի կամ պետական գործակալության համաձայնություն, հաստատում, հրահանգ կամ թույլտվություն, հայտարարագրում, ներկայացում կամ գրանցում:

3. **<u>Խախտումների բացառում:</u>** Փաստաթղթերի կնքումը, ստորագրումը և կատարումը, դրանցով նախատեսված գործարքների կնքումը և Օդանավակայանի գործունեության իրականացումը տվյալ պահին կամ ապագայում.

(ա) հակասության մեջ չէ որևէ գրավի, պարտամուրհակի, պարտատոմսի, համաձայնության, պայմանագրի, համաձայնագրի, վարձակալության, արտոնագրի կամ որևէ այլ տեսակի կամ բնույթի փաստաթղթի կամ պարտավորության կատարման հետ, չի հանգեցնում դրանց խախտման, փոփոխման, դադարեցման կամ շեղման, կամ դրանցով նախատեսված հնարավորությունների կորստյան, չի արագացնում դրանցով պահանջվող աշխատանքները, չի առաջացնում դրանց պայմանների փոփոխման իրավունք, և

չի ստեղծում այդպիսիք, չի առաջացնում որևէ ակտիվի կամ գույքի ծանրաբեռնվածություն, և որևիցե ձևով կողմերից ոչ մեկին չի ազատում վերը նշված այն փաստաթղթերի կամ պարտավորությունների և պայմանների կատարումից, որոնք կարող են ազդել Կառավարչի կամ վերջինիս կողմից օգտագործվող գույքի կամ ակտիվների վրա:

(բ) հակասության մեջ չէ որևէ օգուտի/շահի հետ, չի խախտում կամ առաջացնում որևէ թույլտվության, կոնցեսիայի, ֆրենչայզի, հրահանգի, վճռի, կարգադրության, արգելանքի նախատեսած հնարավորությունների կորուստ, կամ

(գ) հակասության մեջ չէ և չի խախտում Հայաստանի Հանրապետության օրենքների որևէ դրույթ:

Կառավարչի իրավունքների, հնարավորությունների և լիազորությունների գործադրումը որևէ պարագայում չպետք է համարվի շուկայում գերիշխող դիրքի չարաշահում, քաղաքացիական իրավունքի չարաշահում կամ մրցակցության սահմանափակում:

4. <u>Ռեզիդենտություն և մրցութային պահանջներ:</u> Գոյություն չունի որևէ օրենք կամ օրենքի ուժ ունեցող որոշում կամ ակտ, որը կարող է Կառավարչին հարկադրել, որպեսզի վերջինս ծառայությունների, աշխատանքների, ենթակոնցեսիայի կամ այլ կարգի համաձայնության մեջ իր դիմացի կողմի ընտրությունը կատարի որոշակի ընտրության գործընթացով կամ վերջինիս ռեզիդենտության կամ քաղաքացիության հիման վրա, կամ՝ նախընտրություն տալ ըստ ռեզիդենտության կամ քաղաքացիության:

5. <u>Պատասխանատվություն:</u> Օդանավակայանային գործունեության առնչությամբ չկա արդեն իսկ ստանձնված կամ ապագայում ստանձնվելիք պատասխանատվություն որևիցե անձի նկատմամբ, որն իրականացրել կամ իրականացնելու է որևիցե գործունեություն Օդանավակայանում, կամ՝ պատասխանատվություն վերոհիշյալին առնչվող որևիցե այլ գործունեության կամ անձի նկատմամբ, որի պատճառը կամ ծագումը եղել է նախքան սույնի ամսաթիվը, որը կարող է Կառավարչի համար առաջացնել Բացասական հետևանքներ, բացառությամբ՝ սույն Պայմանագրով Կառավարչի կողմից հստակորեն ստանձնվածների:

6. **Տեղեկություններ.** Սույնի Աղյուսակ I-ում ներկայացված բոլոր տեղեկությունների իսկությունը հաստատվել է, և դրանք ըստ էության ստույգ են:

7. <u>Գույք:</u> Կառավարությունը Գույքի բարեխիղճ սեփականատերն է. Կառավարությանն է պատկանում ողջ Գույքը՝ ամբողջությամբ զերծ և մաքուր ծանրաբեռնվածություններից: Գույքը բավարար է Օդանավակայանի այնպիսի գործունեության համար, որը համահունչ է որակի և հուսալիության առնվազն այն չափանիշներին, որոնք ապահովվել են սույնի ստորագրման ամսաթվի դրությամբ:

Ներկայումս չկան և չեն սպառնում որևէ դատական հայցեր, գործեր, վարույթներ, հայցեր կամ վարչական հայցեր ընդդեմ Գույքի, կամ՝ այլ խնդիրներ, որոնք բացասաբար կանդրադառնան գույքի օգտագործման, զբաղեցման կամ արժեքի վրա:

Գույքի նկարագրությունը, որ բերված է Առդիր Դ-ում, ամբողջական է և համարժեք. շենքերը և շինությունները գտնվում են նկարագրված հողակտորների սահմաններում, չեն խախտում որևէ օրենքներ, համաձայնություններ կամ պայմանագրեր, որոնք վերաբերում են դրա օգտագործմանը, և հողը հարակից/առընթեր գույքին որևէ նպատակով չի ծառայում:

Բոլոր տարածքներն արժանացել են պետական մարմինների հաստատմանը (այդ թվում՝ լիցենզիաներ և թույլտվություններ), որը պահանջվում է դրանց սեփականության կամ շահագործման կապակցությամբ, և շահագործվել և պահպանվում են համապատասխան օրենքներին և իրավական ակտերին համահունչ:

Գույքի կամ դրա որևէ մասի, դրա հետ կապված իրավունքների ձեռք բերման նկատմամբ որևէ օպցիոններ կամ նախապատվության իրավունքներ չկան:

Անշարժ գույքի վրա գտնվող բոլոր հարմարություններն ապահովված են կոմունալ-կենցաղային և այլ պայմաններով, որոնք անհրաժեշտ են տվյալ տարածքների շահագործման համար, այդ թվում՝ գազով, էլեկտրաէներգիայով, հեռախոսով և ջրահեռացման համակարգով, ընդ որում՝ բոլոր այս պայմանները պետք է համարժեք լինեն և համապատասխանեն կիրառելի բոլոր օրենքների, հրամանների, կանոնակարգերի և այլ իրավական ակտերի պահանջներին:

Անշարժ գույքի յուրաքանչյուր հողակտոր հարակից է և ուղղակի տրանսպորտային կապով կապված է հանրային ավտոճանապարհի հետ՝ մշտական, անշրջելի, հարմարավետ սերվիտուտով, որից օգտվում է տվյալ հողակտորը, և տվյալ հողակտոր տանող ուղին կրում է հանրային հարթեցված մայթ՝ համապատասխան մայթեզրերով:

Օդանավակայանում ռազմական գործունեություն չի իրականացվում, ռազմական բնույթի բեռներ չեն սպասարկվում, և Օդանավակայանն այդպիսի գործունեության համար նախատեսված չէ, բացառությամբ երբ դա պահանջվում է ազգային անվտանգության արտառոց խնդիրների պատճառով:

8. <u>Բնապահպանական, առողջապահության և անվտանգության խնդիրներ:</u> Ընկերությունները, Կառավարությունը կամ որևէ այլ անձ, որը ներկայումս կատարում է կամ կատարել է գործունեություն Օդանավակայանում, չի ստացել գրավոր կամ բանավոր ծանուցում, տեղեկություն կամ տեղեկատվություն բնապահպանական, առողջապահական կամ անվտանգության որևէ պահանջների փաստացի կամ ենթադրվող խախտումների մասին, այդ թվում՝ չկան հետաքննչական, ուղղիչ կամ վերականգնողական պարտավորություններ՝ կապված

Գույքի հետ, որոնք բխում են բնապահպանական, առողջապահական կամ անվտանգության պահանջներից:

Գույքի վրա հետևյալը գոյություն չունի. (1) ստորգետնյա պահեստ-տարաներ, (2) որևէ տեսքով կամ վիճակով ազբեստ կրող նյութեր, (3) պոլիքլորացված բիֆենիլներ կրող նյութեր կամ սարքավորումներ, կամ (4) աղբալցված հողեր, մակերեսային առանձնացված տարածքներ արտանետումների կամ թափոնների համար:

Կառավարությունը, Ընկերությունը կամ Օդանավակայանում ներկայումս գործող կամ անցյալում գործունեություն իրականացրած որևէ այլ անձ փաստացի կամ օրենքի ուժով չեն ստանձնել որևէ պարտավորություն, այդ թվում՝ այլ անձանց ուղղիչ կամ վերականգնողական միջոցառումներ կատարելու պարտավորություններ բնապահպանական, առողջապահության և անվտանգության պահանջների կապակցությամբ:

Օդանավակայանի ներկայիս կամ անցյալի տարածքներին, գույքին կամ գործունեությանն առնչվող փաստերը, երևույթները կամ պայմանները չեն կանխում, արգելափակում կամ սահմանափակում Բնապահպանական, առողջապահության և անվտանգության պահանջների կատարման շարունակականությունը, չեն առաջացնում հետաքննչական, վերականգնողական կամ ուղղիչ պարտավորություններ Բնապահպանական, առողջապահության և անվտանգության պահանջների համաձայն:

Օդանավակայանի ներկայիս կամ անցյալի տարածքներին, գույքին կամ գործունեությանն առնչվող փաստերը, երևույթները կամ պայմանները չեն առաջացնում պարտավորություններ՝ կապված տարածքում կամ տարածքից դուրս վտանգավոր նյութերի, թափոնների կամ արտանետումների արձակմանը, անձնական վնասվածքներին, գույքի վնասմանը կամ բնական ռեսուրսների վնասմանը:

9. <u>Դատավեճեր:</u> Որևէ դատարանում, գործակալության, կարգավորող, վարչական կամ այլ պետական մարմնի կամ գրասենյակի մոտ կամ արբիտրի առջև չկան հայցեր, հակընդդեմ հայցեր, վարույթներ, բողոքներ, քննություններ կամ հետաքննություններ, որոնք առնչվում են սույնով նախատեսված գործարքներին:

10. <u>Թյուր մեկնաբանման բացառում:</u> Ինչքանով որ Կառավարությունը տեղյակ է, չկան նյութական փաստեր կամ տեղեկություններ, որոնք գրավոր չեն հայտնվել Կառավարչին, և որոնք նյութապես բացասաբար են անդրադառնում, կամ կարելի է ողջամտորեն ակնկալել, որ նյութապես բացասաբար կանդրադառնան Կառավարչի բիզնեսի, վիճակի (ֆինանսական կամ այլ), գույքի, ակտիվների կամ հեռանկարների վրա:

<u>III. Հավաստիացումների և երաշխիքների պահպանում</u>

Կողմերի տված բոլոր հավաստիացումները և երաշխիքները կպահպանվեն (նույնիսկ եթե կողմերը գիտեին կամ հիմք ունեին իմանալու սույնի կնքման օրվա

դրությամբ որևէ երաշխիքների թյուր մեկնաբանումների կամ խախտումների մասին) և լիովին ուժի և գործողության մեջ կմնան Պայմանագրի դադարեցումից հետո երեսուն (30) տարվա ընթացքում:

IV. Հատուցման դրույթներ

Եթե կողմերից մեկը խախտում է (կամ եթե որևէ երրորդ կողմ ներկայացնում է փաստեր, որոնց ճշմարտաբնույթ լինելու դեպքում կստացվի, որ խնդրո առարկա կողմը խախտում է թույլ տվել) սույն Հավելվածում իր կողմից տրված հավաստիացումը, երաշխիքը կամ խոստումը, ապա այդ կողմը (Հատուցող կողմը) համաձայնվում է մյուսին (Հատուցվող կողմին) ամբողջությամբ հատուցել բոլոր այն Բացասական հետևանքների դիմաց, որոնք կարող են վերջինիս համար առաջանալ նախքան հատուցում հայցելու օրը և դրանից հետո (ներառյալ այն Բացասական հետևանքները, որոնք Հատուցվող կողմը կարող է կրել համապատասխան պահպանման ժամկետի ավարտից հետո) և պայմանավորված են խախտմամբ (հայցվող խախտմամբ), բխում են դրանից կամ կապված են դրա հետ՝ պայմանով, որ Հատուցող կողմը հետևի սույն Հոդվածով և, անհրաժեշտության դեպքում, Պայմանագրի XXI հոդվածով սահմանված կարգին, բացառությամբ Հատուցվող կողմի կոպիտ սխալի կամ դիտավորյալ կատարված սխալ գործողությունների պատճառով առաջացող հանգամանքների:

Եթե կողմերից մեկը խախտել է սույնով իր կողմից որևէ առումով տրված հավաստիացում, երաշխիք կամ խոստում, ապա նույն առումով մեկ այլ հավաստիացման, երաշխիքի կամ խոստման առկայության փաստը (անկախ դրանց հարաբերական որոշակիությունից), որը տվյալ կողմը չի խախտել, չպետք է մեղմի կամ թուլացնի այն հանգամանքը, որ տվյալ Կողմը խախտել է առաջին հավաստիացումը, երաշխիքը կամ խոստումը:

Եթե խախտվում է սույն Պայմանագրով տրվող որևէ հավաստիացում, երաշխիք կամ խոստում, ապա Հատուցվող կողմը պարտավոր է Հատուցող կողմին ծանուցել հայցի մասին: Հատուցող կողմը պարտավոր է հայցն ստանալուց հետո երեսուն օրացուցային օրվա ընթացքում Հատուցվող կողմին տեղեկացնել, թե արդյոք Հատուցող կողմն ընդունում կամ մերժում է, մասամբ կամ ամբողջությամբ, Հատուցվող կողմի հայցը: Եթե հայցը մերժվում է ամբողջությամբ կամ մասամբ, ապա Կողմերը պարտավոր են «Deloitte & Touche», «Andersen», «PriceWaterhouseCoopers» և «Ernst & Young» ընկերություններից մեկնումեկին նշանակեն՝ գնահատելու հայցը և, առկայության դեպքում, հատուցման գումարը: Եթե Կողմերը համաձայնության չեն գալիս աուդիտորական ընկերության ընտրության շուրջ, ապա աուդիտորական ընկերությունն ընտրվում է վիճակահանությամբ՝ նշված ընկերությունների թվից: Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է ընտրված ընկերությանը ծանուցել նրա ընտրության մասին: Ընտրված ընկերությունն իր կարծիքն է ներկայացնում Կողմերին ընտրության մասին ծանուցումն ստանալուց հետո երեսուն աշխատանքային օրվա ընթացքում՝ Կողմերից տվյալ կապակցությամբ ստացված բոլոր տեղեկությունների հիման վրա: Կողմերը պարտավոր են տվյալ խնդրին առնչվող բոլոր տեղեկությունները

հայտնել, որպեսզի ընտրված ընկերությունը կարողանա գնահատել և լուծում տալ հայցին:

Աուդիտորական ընկերության կարծիքը պարտադիր չի լինի, սակայն հաշվի կառնվի Կողմերի կողմից նյութական եզրահանգումների մասով, որպեսզի տարաձայնությունը լուծվի խաղաղ ճանապարհով՝ նախքան Պայմանագրի XXI հոդվածով նախատեսված վարույթներին դիմելը:

Վնասի հատուցման արժույթը նույնն է, ինչ Պայմանագրի 12.2 կետում նշվածը:

Եթե Կողմերից մեկը մյուս Կողմին հայց է ներկայացնում, և եթե հայց ներկայացնող Կողմը նախկինում թույլ է տվել պարտավորության խախտում, ապա հայցն ստացող Կողմն իրավասու է չկատարել տվյալ պարտավորությունն այնքան ժամանակ, մինչև որ հայց ներկայացնող Կողմը կատարի իր համապատասխան պարտավորությունը:

V. Երրորդ անձանց հետ կապված խնդիրներ

Եթե որևէ երրորդ անձ կողմերից որևէ մեկին ինչ-որ խնդրի մասին ծանուցում տա («երրորդ անձի հայց»), որը հատուցման հայցի տեղիք տա, ապա ծանուցում ստացած կողմը պետք է անհապաղ մյուսին գրավոր տեղեկացնի այդ մասին՝ պայմանով, սակայն, որ ծանուցում ուղարկելու ուշացումը չպետք է խնդրո առարկա կողմին ազատի սույնով նախատեսված պարտավորություններից, բացառությամբ եթե (և միայն այնքանով, որքանով) տվյալ Կողմի գործողությունները կանխորոշված են:

Աղյուսակ 1

Տեղեկություններ, որոնց իսկությունը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից